1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16. Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.



ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ"

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1907 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Արշակ Գրիգորեան Իզմիրեանց, Մարիա Գրիգորիեվնա Կորշ, Մարգարիտ Գրիգորեան Իզմիրեանց, Սօֆիա Եսայեան Իզմիրեանց և Պետր Պետրովիչ Կորշ սրտի վշտով յայտնում են ծանօթներին և ազգականներին առաջինների թանկագին և անմոռանալի մօր, միւսների սիրելի քրոջ և զոքանչի

Սօֆիա Միքայէլեան Իզմիրեանցի

յանկարծահաս մահվան մասին, որ տեղի է ունեցել նոյեմբերի լոյս 20-ի գիշերը։ Ամբիծը ուրբաթ 24-ին և շաբաթ 25-ին նոյեմբերի, երեկոյեան ժամի 6-ին հանգուցեալի բնակարանում Գրիբոեդովսկայա փողոց, տուն № 24։ Թաղման մասին կը յայտարարվի առանձին։ (Ն. Ն. ու.) 2—3

Իշխանուհի Եղիսաբէթ Սողոմոնեան Արղութեան-Երկայնաբազուկ և Գէորգ Յովսէփեան Փարսեանը իր որդիներով յայտնում են ազգականներին և բարեկամներին, առաջինը թանկագին և անմոռանալի մօր՝ երկրորդը՝ քրոջ, իսկ վերջինները սիրելի հօրաքրոջ

ԿԱՏԱՐԻՆԷ ՅՈՎՍԷՓԵԱՆ ՄԵՀՐԱԲԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ նոյեմբերի 17-ին։ Հոգեհանգիստը կը լինի հինգշաբթի և ուրբաթ երեկոյեան ժամը 6-ին, իսկ յուղարկաւորութիւնը շաբաթ, նոյեմբերի 25-ին, առաւօտեան ժամը 10-ին, իր բնակարանից (Բեհբութեան փողոց, № 32 սեփական տուն) դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խոջիվանքի գերեզմանատանը։ Ն. ու. 1—2

Բացված է բաժանորդագրութիւն

„ՀՕՍԱՆՔ"

Քաղաքական, տնտեսական եւ հասարակական օրաթերթի

Բաժնեգինն է՝ ամսական—50 կ., մինչև տարվայ վերջը 60 կ.։ Հատով—3 կոպ.։

Օրաթերթը կը սկսի լոյս տեսնել նոյեմբերի 23-ից։

Դիմել՝ Тифлисъ, Николаевская ул. № 9, Редакція «Осанкъ». տո. 3—4

Հայկական Դեմոկրատական Կուսակցութեան Ժամանակաւոր Կենտրոնական Բիւրօն

Յայտարարելով կուսակցութիւնը կազմված՝ համաձայն առաջին ընդհանուր ժողովի որոշման, հրաւիրում է իր դեկլարացիայի մէջ յայտարարված սկզբունքների համակրողներին՝ համախմբվել և կազմել տեղական ճիւղեր իր կօմիտէաներով և այդ մասին յայտնել կենտրոնական բիւրօյին։

Ժամանակաւոր բիւրօյի անդամներ՝—Ս. Յարութիւնեան, բժիշկ Կ. Սաթեփանեան, Ալեք. Քալանթար, Հ. Առաքելեան, Յ. Սպենդիարեան, Բ. Վէրմիշեան, Միք. Աթաբեգեան, բժիշկ Բ. Աղասարեան, բժ. Տ. Գեորգբեգեան, Յ. Ղուկասեան, Լ. Դանիէլեան, բժ. Մ. Մովսիսեան, Արշ. Մխիթարեան։ տո. (ա. օ.) 5—10

Կիրակի, նոյեմբերի 26-ին, առաւօտեան ժամը 11-ին

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

նշանակված է

Հայոց Դրամատիկական Ընկերութեան

արտակարգ ընդհանուր ժողով.

Զբաղմունքի առարկաները՝

1) Հանգուցեալ դերասան՝ Գ. Պետրոսեանի ընտանիքը ապահովելու խնդիրը։
2) Մասնաժողովի զեկուցումը Ակումբի մասին։
3) Ընտրութիւններ վարչութեան մէկ անդամի փոխանորդի և վերստուգող մասնաժողովի անդամների։

տո. (19, 23, 26) 2—3

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Անաստասեւսկայա փողոց, տուն № 18, հեռախօս 966։

Հիւանդ կանանց ընդունելութիւնը ամեն ժամանակ նախօրօք յայտարարութեան համաձայն։

Երեխաների հիւանդների ընդունելութիւնը ամենայն օր ցերեկվայ ժամը 11—12 հետևեալ բժիշկների ձեռքով.

Ա. Ր. Ֆիշեր.—երեքշաբթի, շաբաթ։
Ա. Գ. Բարսուկով.—չորեքշաբթի։
Ա. Գ. Շահ-Պարոնեան.—կիրակի, հինգշաբթի։
Ա. Ա. Նովիցկի.—երկուշ. ուրբաթ։

Երեխաների հիւանդութիւնների համար Ն. Զ. Ունիօվը հիւանդ երեխաներին ընդունում է երկուշաբթի և հինգշաբթի օրերը, 2—3 ժ.։

Հիւանդանոցին կից կատարվում են քիմիկօ-միկրօսկոպիական հետազօտութիւններ՝ մէզի, խորխի և այլն։

Սնունդների քննութիւն, սրսկումն ևայլն։ 1—10

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Պատիւ ունի յայտնել բոլոր տանտէրերին և կալուածքների կապալառուներին, որ ջրաչափերը պէտք է ամեն ժամանակ մատչելի լինեն ջրամբարի գործակալների համար, ջրաչափերի բանալին պէտք է պահպանվի անպատճառ նոյն տան մէջ և տրվելու է գործակալին օրվայ ամեն ժամանակ։ Ջրաչափերի առաջ չը պէտք է որևէ առարկայ կամ նիւթ դնել և պէտք է յարմար տեղերում գտնվեն՝ դիտելու համար, հեռու այրվող բանկվող նիւթերի պահեստներից։ Քաղաքային վարչութիւնը հարկաւոր է համարում նախազգուշացնել տանտէրերին և տների կառավարիչներին, որ գործակալներին մերժելու դէպքում—կը փակէ տան ջուրը։ (տո) 1—1

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալեքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ՐՈՒԴԵՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.
Բժ. Ֆ. Վ. ԶՈՒԴԵՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ., ուրբ. 2—3 ժ.
Բժ. Մ. Ի. ԽԱՆՉԵՎՍԿԻ.—Ականջի, քթի և բկի, չորեքշ., ուրբ., կիր. 2—3 ժ.
Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.
Բժ. Ն. Մ. ԱՍՊԻՍՕՎ.—Քթի, բկի և ականջի, երկ., երեք. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.
Բժ. Վ. Գ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիվանդով ամենայն օր 4—5 ժ.
Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՁԷ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.
Բժ. Վ. Ի. ԻՆԱԵՎ.—Ներքին, 1—2 ժ. երեքշ., չորեք., շաբ., կիրակի, կանանց երկուշաբթի, հինգշ., 1—2 ժ., ուրբ. 12—1 ժ.։
Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Ներքին, երկու. երեք., հինգ., շաբ. 4—5 ժ.
Բժ. Ա. Տ. ՐՕԶՄԱՐԻԿՍԿԻ.—Երկու., չորեք., շաբ 11—12 ժ. երկ., ուրբ. 1—2 ժ.
Բժ. Ն. Ի. ՆԷՈՒՅՄԻՆ.—Աչքի, երկ., երեք., չոր., ուրբ.. շաբ., 11—12 ժ.
Բժ. Ա. Ա. ՆՕՎԻՑԿԻ.—Կանանց, երկու., չոր., կիր. 12—1 ժ., երեք., ուրբ. 1—2 ժ.
Բժ. Զ. Ֆ. ՆԵՎԶՕՐՕՎ.—Ատամի հիւ. 11—1 ժ. ամենայն օր.
Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ } Կլինիքական անալիզ
Բժ. Կ. Ի. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ } Կլինիքական անալիզ
Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմն. մասսաժ, ելեքտր. 4—6 ժամ.
Մ. Ե. ԳՕՐՕԴՑՕՎԱ.—Մասաժ. 11—4. ժ.
Ս. ԵՍ. ՊԱՒԼՕՑԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.
Վ. Ի. ԻՆԱԵՎ.—Ներքին, 11—1 ժ. երկ., երեք., չորեք., ուրբ., կանանց 1—2 ժ. հինգշ., շաբաթ., կիրակի։

Բժշկական խորհուրդներ, մասսաժ, սրսկել, անզգամահատել, անալիզի ենթարկել, հիպնօզել, սանտուների և ծառաների քննելը—ըստ համաձայնութեան։

տո. (ա. օ.) 7—144

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դեռ շարունակվում է. Վերջին տեղեկութիւններ. Ցաւակցական հեռագրներ. Կուլտուրական փորձ Գանձասարում. Վանի աչուելի կացութիւնը. Կառավարչական փաստեր և լուրեր. Պետական Դումայի ընտրութիւնների շուրջը. Գործ չը կայ. «Մշակ» լրագրի խմբագրութեան. Տեղեկութիւններ գաւառից. Խօսակցութիւն կոմս Հէյդէնի հետ. Հաշտութիւնը Ջիւանշիրում. Ներկայացուցչական կառավարութիւն. Իմ պատասխանը դեմագոգիայի արհեստաւորին. Լրագրներ Զանգեզուրում. Ի՞նչ արժէք ունի. Բողոքներ. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

## ԴԵՌ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

I

Մեր հասարակութեան պանդուխտ խաւերում մտատանջութիւն է պատճառում Էջմիածնում տիրող դրութիւնը։

Ճիշտ է՝ ներկայ րօպէում որևէ սուր խնդիր և ծանր թիւրիմացութիւններ տեղի չունեն, բայց նրանք կարող են շատ շուտ ծագել, հէնց որ առաջ կը գան փոքր ի շատէ պատասխանատու հանգամանքներ։

Այդ վտանգների երկիւղից դուրս կիտվել, դիզվել են մի շարք հարցեր, որոնք սպասում են իրանց լուծման և ընթացք չեն ստանում։

Կրթական դպրոցական գործը պահանջում է առանձին հոգատարութիւն և հսկողութիւն, մինչդեռ նա թողնված է բաղդի կամքին։ Ի՞նչ է կատարվում մեր դպրոցներում, ինչ դրութեան մէջ է նրանց կրթական և տնտեսական վիճակը յայտնի չէ ոչ ոքի։ Ոչ թեմական տեսուչներ կան, որոնք հսկէին գործի վրա և ոչ ուրիշ հոգատարներ։ Էջմիածինը նոյնիսկ փորձ չէ փորձում մի ժամանակաւոր շրջիկ ուղարկելու և ծանօթանալու մեր կուլտուրական կեանքի այդ կարևոր գործի ներկայ դրութեան և կարիքների հետ։ Իսկ պատասխանատւութիւնը մեծ է և նրան անտես անելը յանցանք է։

II

Մի ուրիշ կարևոր խնդիր՝ կալուածների կառավարութեան և բարեկարգութեան խնդիրը՝ ոչ մի դրական քայլ չէ արել դէպի առաջ։

Թէ իրաւունքի, թէ կուլտուրական պարտաւորութեան և թէ պատուի խնդիր է դրված մեր առաջ։

Ցեռ են դարձված կալուածքները և նորից յանձնված են հայ ժողովրդին, իսկ ինչ ծրագիրներ ենք մշակել մենք նրանց կանոնաւոր կառավարութեան և շահագործութեան համար։ Եւ գոնէ նախնական փորձեր սկսած լինէինք մեր ապագայ գործունէութեան համար։

Մեզ համար չեն պարզված նոյնիսկ ամենատարրական վիճակագրական տեղեկութիւնները, որոնցով մենք կարող լինէինք գաղափար կազմել տնտեսութեան եղանակների և հողերից օգտվող ազգաբնակութեան պահանջների մասին։

Մենք ապրում ենք այնպիսի անցողական փափկանկատ մի ժամանակում, երբ ոչ միայն տարիները, այլև ամիսները դեր են կատարում կեանքի մէջ և չէ կարելի ասել, որ կալուածքների բարեկարգութեան խնդիրը այդ տեսակ խնդիրներից չէ։

III

Իսկ քաղաքական այն քաոսը, որ տիրում է Էջմիածնում և ազդում է վարչական ու ուրիշ խնդիրների վրա։

Միթէ անձնական մխտումները և մասնաւոր ազդեցութիւնների ճնշումները պէտք է շարունակեն տնօրինել այն գործերը, որոնց վերաբերութեամբ ժողովուրդը այնքան մտատանջվում է։ Եւ միթէ կանօնաւորութիւնը չը պէտք է վերականգնի վեհարանի շուրջը։

Տարիներ շարունակ մենք բողոքել ենք Թայֆայական և նեղ կղերական դասերի ոտնձգութիւնների դէմ և պահանջ յայտնել, որ ժողովրդական հսկողութիւնը և հրապարակական քննադատութեան ազատ ոգին մերկացնեն խարդաւանքները ու չար գործերը և հեռու մղեն ասպարէզից անարժան գործավարներին։ Արդեօք հին խաւարամիտ և կղերական խմբով համակված անձը կը սկսէ իր սուր դաւերը առաջ քաշել, թէ հրապարակի վրա էժան ծախվող դրօշակներով վարագուրված շահամոլը կը փորձէ իր ժամանաւոր հաշիւները աջողեցնել—մենք կը բողոքենք, մերկացնելով կեղծիքը և նշաւակելով վատութիւնը։

Մաքուր ժառանգութիւն և մաքուր գործ—ահա ինչ է մեզ հարկաւոր։

IV

Այս օրերս, երբ մեր հասարակութիւնը ողբում էր Արիստակէս Սեդրակեանի վաղաժամ կորուստը, մենք լսում էինք անվերջ ափսոսանքներ այն բանի մասին, որ Էջմիածինը զրկվեց իր առաջնակարգ խոշոր գործողից։ Հասարակութիւնը յոյս ունէր որ Սեդրակեանը պէտք է մեծ դեր կատարէր Էջմիածնի գործերում։

Բայց մենք մոռանում ենք մի բան, որ նոյն Արիստակէսը կարող եղած կը լինէր և վերջին 10—14 տարում շատ գործ կատարել Էջմիածնում, սակայն Էջմիածինը դուրս էր վանդում, հալածում և աքսորում էր Արիստակէսներին, որովհետև նա կարգ, կանօն, շիտակ գործունէութիւն և վարչական առաջադիմութիւն չէր սիրում, այլ ընդունում էր միայն կամայականութեան վրա հիմնված գործունէութիւն, որտեղ դեր էին կատարում ժամանաւոր ազդեցութիւնները, օրվայ աջողութեան հերոսները, նեպոտիզմի սիրահարները և հաստատ սկզբունքների անհաշտ թշնամիները։

Ահա և հետևանքը։

Միթէ անցեալի տխուր դասերը բաւական չեն։

Սնանկութեան դուռն է հասել հին սիստեմը։ Սթափվելու ժամանակն է։

Ա. Քալանթար

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեզ հաղորդում են, որ Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովը տեսնելով որ հայ տառապեալներին օգնելու համար Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևանի, Գանձակի, Արէշի, Ղազախի գաւառներում անհագին նիւթական միջոցներ են պէտք, որոշել է ուղարկել Մոսկվա, Պետերբուրգ և հիւսիսային Կովկասի հայաբնակ քաղաքները մի պատգամաւորութիւն, բաղկացած մի հոգևորականից և Յանձնաժողովի երկու անդամներից։ Յանձնաժողովի ստացած տեղեկութիւններից երևում է, որ այդ պատգամաւորութիւնը կարող է ունենալ աջողութիւն, քանի որ Յանձնաժողովի մէջ են կենտրոնացած բոլոր տեղեկութիւնները և նա մինչև այսօր ծախսել է աւելի քան 200,000 րուբլի։

—

Աստրախան, նոյեմբերի 22-ին

Աստրախանի թեմական առաջնորդութեան համար երկու ընտրված թեկնածուներն էլ, թէ Բագրատ վարդապետ Վարդազարեանը և թէ Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսիսեանը հրաժարվեցին։

Կաթողիկոսի դիւանապետ Մելիք-Թանգեանից ստացվեց հեռագիր, որով յայտնվում է նոր ընտրութիւններ կատարել առաջնորդական թեկնածուներ ընտրելու համար։

—

Տիկոռ, Կաղզուանի գաւառ, նոյեմ. 16-ին

Կաղզուանից կոզակների հետ միասին եկել էին նաչալնիկի օգնական Խուցիևսովը և ստրաժնիկների օֆիցեր կապիտան Բէժիեակովը, որոնք հրաւիրեցին տեղս մուսուլման քիւրդերից և եզիդիներից մի քանի ազդեցիկ մարդկանց, որոնց բացատրելով ընդհարումներից առաջացած վնասները, առաջարկեցին մոռանալ մինչև օրս գոյութիւն ունեցող թշնամութիւնն երկու ազգերի մէջ և հաշտվել։

Այդ առաջարկութիւնը երկու կողմերից էլ ընդունվեց ուրախութեամբ և հաշտութիւնը կայացաւ։

Որքան նշանակութիւն կունենայ այդ հաշտութիւնը, դա միայն ցոյց կը տայ ապագան։

Մինչև օրս քիւրդերի կողմից կատարված սպանութիւնները, թալանները, խոտ վառելը և այլն, եզիդիները վերագրում են բաղարջուղցի կասկան ցեղին պատկանող Իսմայիլ-բեգ Ռոստամբեգովին, որը գաղթեցրեց Տաճկաստան իր ընտանիքն ուրիշ շատ քիւրդերի հետ և թէ կազմակերպեց այժմս գոյութիւն ունեցող ջանբեգարական խմբերը։

Այս բոլորի մասին եզիդիները դիմեցին բարձր իշխանութեան, որի կարգադրութեամբ Ռոստամբեգովը ձերբակալվեց և քննութեան է ենթարկված։

Ամսիս 3-ին տեղական կառավարութեան կարգադրութեամբ մի քանի ստրաժնիկների հետ Ռոստամբեգովն ուղարկվում էր Կաղզուան։ Եզիդիները լսելով այդ, մօտ 200 հոգի զինված բռնեցին բոլոր ճանապարհները, որ Ռոստամբեգովին սպանեն, բայց ճանապարհի կիսից նրան վերադարձրին Տիկոռ, որտեղ նա մնաց մինչև ամսիս 9-ը, յետոյ կօզակների հետ ուղարկվեց։

Չը նայած, որ սպանված եզիդիների թւում կային և երկու հայեր, բայց տեղիս հայերը աչքի առաջ ունենալով ապագայ կործանիչ ընդհարումները, որոնք կարող են առաջանալ շատ չնչին թիւրիմացութիւններից, ամենևին նշանակութիւն չը տուին այդ անմեղ սպանվածներին և բոլորովին չը խառնեցին իրանց բարեկամական յարաբերութիւնը հարևան մուսուլմանների հետ։ Վերջիններից շատերը սպանութիւնների ժամանակ գտնվում էին հայ գիւղերում և փախենում էին վերադառնալ իրանց գիւղերը, բայց հայերը այնքան բարի գտնվեցին, որ դրանց բոլորին վերադարձրին իրանց տեղերը։

Ռոստամբեգովին ամսիս 3-ին տեղս սպանելու գործում հայերը ոչ թէ մասնակցում էին, ինչպէս գրել էր Նախիջևանից մի տեղեկատու «Բաօ» ստորագրութեամբ (№ 248), այլ մինչև անգամ գտնվեցին այնպիսի հայեր, որոնք պարտք համարեցին Ռոստամբեգովին անվնաս տանել, ուր որ նա կը ցանկար, բայց վերջինիս դուրս չէին թողնում զատարանից և սպասում էին նրա մասին առանձին կարգադրութեան բարձր իշխանութեանից։

Քիւրդերի մի քանի փոքր գիւղերը, որոնք բաղկացած էին 10—12 տներից, տեղափոխվում են աւելի մեծ գիւղեր, որի նպատակը ոչ ոքի յայտնի չէ։

Մուսուլմանների և եզիդիների մէջ երթևեկութիւնը բոլորովին ընդհատված է։

Արշալոյս Մկրտչեանց

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Ծղահան, նոյեմբերի 20-ին

Ցաւում ենք մեր խորին վիշտը մեր ականաւոր եկեղեցական գործիչ Արիստակէս արքեպիսկոպոսի մահվան առթիւ։

Բագրատ վարդապետ, Խորհրդարան, Հոգաբարձուներ, Ուսուցչական կազմ։

—

Սիմֆերօպօլ, 19 նոյեմբերի

Արիստակէս Սեդրակեանի մահվան մասին ձեր հաղորդած տխուր լուրը տեղիս հայ հասարակութեանը մեծ վիշտ պատճառեց։ Ազգը կորցրեց իր ազնիւ, մարդասէր և առաջադէմ մարդուն։

Երեցփոխ Բուշնարէվ

## ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՓՈՐՁ ԳԱՆՁԱՍԱՐՈՒՄ

I

Գանձասարի վանքի կալուածքում պատրաստութիւններ են տեսնվում կազմակերպելու կատարելագործված կաթնատնտեսութիւն։

Սկզբում փորձը կը լինի սահմանափակ ծաւալով և ապա նա կընդարձակվի։ Ձեռք կը բերվի սերզատ մեքենայ և կը սկսվի կատարելագործված իւղագործութիւնը, որի արդիւնքները կուղարկվեն Շուշի ծախելու համար։

Պէտք է աշխատել գրաւել դէպի այդ գործը գիւղական այն ազգաբնակութիւնը, որ ապրում է վանական հողի վրա, և սովորեցնելով կատարելագործված տնտեսութիւն՝ աւելացնել նրա տարեկան եկամուտը և դարձնել նրան տնտեսապէս ուժեղ։

Լեռնային և անտառոտ տեղերում, ուր անասնապահութիւնը աւելի յարմարութիւններ ունի զարգանալու, քան դաշտային տնտեսութիւնը գիւղացուն մեծապէս կարող է նպաստել կաթնատնտեսութեան զարգացումը։ Եւ վանքի արած աջող փորձը կարող է օրինակ ծառայել շրջակայ ազգաբնակութեան համար

II

Մեր խմբագրատուն մտան խորհրդակցելու այդ գործի կազմակերպութեան մասին բժ. Բահաթրեան՝ ագրոնոմ Աարստամենայնի հետ։ Մենք յայտնեցինք մեր կարծիքները և խորհրդածութիւնները։

Անշուշտ սկզբում մեծ ծախքեր չեն անվի և գործը կը սկսվի փոքրից. բայց և այնպէս կարևոր է, որ նոր ձեռնարկութեան համակրող մարդիկ նպաստեն իրանց օժանդակութիւններով, որպէս զի կարելի լինի փոքր ի շատէ փայլուն ձևով կազմակերպել գործը և նրան վարպետ չանել միջոցների պակասութեան պատճառով։

Ամեն բանի մէջ սկիզբն է դժուար, իսկ երբ նա աջող կազմակերպվեց և հող բռնեց, այնուհետև արդիւնաբերութիւնը սկսում է զարգանալ ինքն իրան։

Եւ ահա այդ աջող սկիզբը դնելու պէտք է օժանդակել։ Սկսված նախաձեռնութեանը պէտք է ցոյց տալ աջակցութիւն։

Ա. Քալանթար

## ՎԱՆԻ ԱՉՈՒԵԼԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Վանէն մեզ հաղորդուած տեղեկութիւններէ կը քաղենք հետևեալը.

«Կառավարութիւնը դարձեալ խիստ կասկածոտ աչքով կը նայի Հայերիս վրայ և ամենափոքր բանին մեծ նշանակութիւն կուտայ. բայց առայժմ կը դիտէ միայն և շատ հաւանական է որ չար ծրագիրներ կը պատրաստէ մօտիկ ապագայի մը մէջ գործադրելու համար երբ պատեհութիւն տեսնէ։ Իսկ երկիրը մատնուած է կատարեալ անիշխանութեան և միամիտ պարագլուխներ ազատ ասպարէզ գտած կը խաղան ամբողջ հասարակութեան հետ։ Սակայն ինձ կը թուի թէ ձմեռը շատ մօտ է և հաւանօրէն քիչ ատենէն անհնելի փոփոխիկ մը պիտի ծագի և ամեն ինչ քարուքանդ անէ. պիտի տուժէ նորէն հայ տարրը։ Միտքերն այնչափ յուզուած են, ժողովուրդը ժամանակաւորապէս այնչափ ելեկտրականացած է որ դիւէն մէկը և ոչ մի գաղափար կարող է կազմել իրականութեան վրայ։

Անհագին թուով բազմութիւն մը կը թողու երկիրն ու կը գաղթէ կերթայ Ռուսիա. զուլումի ու անօթութեան երկրէն կը փախչին. դարձեալ զուլում ու անօթութիւն։ Կոյր ու խուլ լինելու է հայ ժողովուրդը այս անհնելի թշուառութիւնը չտեսնելու և չզգալու համար. մանաւանդ երբ մարդ այդ վիճակ դարմանելու մի միջոց չունի և յուսադրական ու քաջալերական երևոյթներ կը պակսին......»

(«Արմենիա»)

## ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՒ ԼՈՒՐԵՐ

Պետական բարձրաստիճան պաշտօնեաների նոյեմբերի 11-ին կայացած խորհրդակցութեան ժամանակ քննութեան առարկայ է եղել դարձեալ կաբինէտի գործողութիւնների ծրագիրը։ Ինչպէս յայտնի է, նախորդ նիստերում այն ծրագիրը, որ լիովին հաւանութիւն էր ստացել հոկտեմբերի սկզբներում, բաւականաչափ կրճատման ենթարկվեց և իրագործման համար նշանակված առաջարկութիւններից միայն օտարազգիների և օտարադաւանների հարցերը մնացին։ Նոյեմբերի 11-ի նիստում ծրագրի այդ մնացորդներն էլ բաւականաչափ պակասեցին։ Իգնատիեվի 1882 թւականի օրէնքների վերացման հարցը, որ արդէն ընդունվել էր մինիստրների խորհրդի մէջ և բարձրաստիճան պաշտօնեաների հոկտեմբերի նիստում հաւանութիւն էր ստացել, վերջին նիստում խոշոր տարաձայնութիւններ առաջ բերեց։ Խորհրդի անդամներից ոմանք հակառակ էին այդ օրէնքների անմիջական վերացմանը, պատճառաբանելով որ անհրաժեշտ է ուշադրութեան առնել ժողովրդի ձայնը, իսկ այդ ձայնը, վերացման հակառակորդների կարծիքով, պահանջում է ոչ մի դիւրութիւն չը տալ հրեաներին։ Ոմանք էլ մատնանշում էին, որ Դումայի գումարվելուց առաջ դիւրութիւններ տալու դէպքում հակահրէական անկարգութիւններ կարող են տեղի ունենալ։ Օպպօզիցիան այնքան զօրեղ էր, որ այդ 1882 թւականի օրէնքների ընդունված վերացումը յետաձգվեց մինչև Դումայի գումարվելը։ Տարաձայնութիւններ եղան Լեհական Թագաւորութեան մէջ ինքնավարութիւն մտցնելու առթիւ նոյնպէս։ Անդամներից մի քանիսը անհրաժեշտ էին գտնում այդ բարենորոգումը ևս յետաձգել մինչև Դուման հաւաքվելը, աւելի նպատակայարմար գտնելով տարածել ամենուրեք ինքնավարութեան այն տիպը, որը կը մշակէ Դուման 1892 թ. զեմստվային և քաղաքային ինքնավարութեան փոխարէն։ Սակայն այդ հարցը չէ քննվել կտրական ձևով, և նրա լուծումը առայժմ դժուար է նախագուշակել։

Այդպիսով կաբինետը այն բարենորոգութիւնների ծրագրից, որը նա մտադիր էր իրագործել Դումայի հաւաքվելուց առաջ, համարեա թէ ոչինչ չը մնաց։ Այդ հանգամանքին բարձր շրջաններում մեծ նշանակութիւն են տալիս և սերտ կերպով շաղկապում են Ստոլիպինի դրութեան հետ։

Որ այդ դրութիւնը բաւականին խախտված է արդէն, դա այլևս գաղտնիք չէ շրջանների համար և շատերը նոյնիսկ գտնում են, որ դժգոհութիւնը արտայայտվում է չափազանց խիստ ձևով։ Ոմանք կարծում են, որ այդ խիստ ձևը իր որոշ նպատակն ունի։ Ասում են, որ այդ մերժումը Ստոլիպինի վրա մեծ տպաւո-

ւթիւն է գործել և թուլացրել է նրա եռանդը ընտրութիւնները կազմակերպելու գործում: Նրա դրութեան անորոշութիւնը մանաւանդ սաստկանում է նրանով, որ բարձր շրջաններում փոխվել է վերաբերմունքը դէպի ծայրայեղ միապետական կուսակցութիւնները: Ստոլիպինը, ինչպէս ասում են, յարմար չէ գտնում նորից սերտ կերպով միանալ ռուս ժողովրդի դաշնակցութեան հետ և այդ բանը աւելի է սաստկացնում յարաբերութիւնների լարվելը: Մինչդեռ բարձր շրջաններում ներկայումս այն հաստատ համոզմունքն ու տրամադրութիւնն է նկատվում, որ ռուս ժողովրդի դաշնակցութիւնից է կախված Դումայի բնաւորութիւնը. բարձրաստիճան պաշտօնեաներից մի քանիսը վճռական կերպով յայտնում են, որ իսկական ռուս մարդկանց եռանդուն գործունէութեամբ միայն հնարաւոր կը լինի ստեղծել այնպիսի Դումա, որը կարելի է մի քանի ամիս պահել: Մինչդեռ Ստոլիպինը, ինչպէս ասում են, ռուս-ժողովրդի դաշնակցութեան դերը շատ աննշան է համարում և այդ պատճառով էլ գործնական չէ գտնում նրանց առաջ որևէ պարտաւորութիւն յանձն առնել:

Ընտրութիւնների ժամանակ հրատարակվելիք պաշտօնական օրգանների հրատարակութեան բնաւորութեան մասին ծագած վիճաբանութիւնները վերջացել են նրանով, որ վճռել են այդ օրգաններին բացարձակ պաշտօնական բնաւորութիւն չը տալ: Այդ պատճառով էլ նրանց խմբագիրներին որոշ չափով ինքնուրոյնութիւն կը վերապահվի: Որպէսզի այդ օրգանները իրանց բովանդակութեամբ միատեսակ չը լինեն և չիմացվի, որ նրանց ղեկավարութիւնը մայրաքաղաքից է կատարվում, խմբագիրներին մայրաքաղաքից կը հաղորդվեն ոչ թէ ամբողջ յօդուածներ, այլ միայն թեմաները և նրանց լուսաբանութեան բնաւորութիւնը, իսկ հարցի մշակումը կը վերապահվի ամբողջապէս խմբագիրներին: Իսկ Պետերբուրգից միայն կը հսկեն, որ դրված յանձնարարութիւնները ճիշտ կերպով կատարվեն: Լուրջ հարցերը կը մշակվեն մայրաքաղաքում: Գործելու կերպի մասին արդէն համաձայնութիւն է կայացել ներքին գործերի մինիստրութեան բոլոր գլականագէտների մէջ, սակայն այն հանգամանքի շնորհիւ, որ Ստոլիպինը դիրքը խախտվելու վրա է, գործունէութիւնը առ այժմ չէ սկսվում, թէև նախապատրաստական աշխատանքները շարունակվում են կարգով: («Вѣкъ»)

### ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—Դեռևս մինչև այժմ ընտրութիւնների ժամանակը որոշված չէ, և այդ առիթով ներքին գործերի մինիստրի խորհրդի մէջ յաճախակի նիստեր են տեղի ունենում, որտեղ զանազան հակասական կարծիքներ են արտայայտվում: Ամենից աւելի վէճի առարկայ է դառել այն հարցը, թէ Դումայի անդամների ընտրութիւնը նշանակել արդեօք մի օրում թէ զանազան ժամանակամիջոցներում: Վիճաբանութեան առիթ է տալիս և տարաձայնութիւն է ստեղծել նոյնիսկ ընտրութիւնների վերաբերեալ հարցը: Ոմանք չեշտում են, որ լիազօրների և Դումայի անդամների ընտրութեան մէջև ժամանակամիջոցը պէտք է լինի շատ կարճատև, որպէսզի հնարաւորութիւն չը տրուի ընտրված լիազօրներին բլոկ կազմելու: Միւսները ընդհակառակը, նպատակայարմար են գտնում որ այդ ժամանակամիջոցը լինի մի քիչ երկար, որպէսզի հնարաւորութիւն լինի հետևել լիազօրներին և որոշել նրանց տրամադրութիւնը, հարկաւոր դէպքում «համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար»: Ինչ վերաբերում է լիազօրների կամ պատուիրակների ընտրութեանը, անհրաժեշտ են համարում նշանակել առաջիկայ դեկտեմբեր ամսում կայանալիք նահանգական զեմստվային ժողովներից երկու շաբաթ յետոյ: Այդպիսով լիազօրների ընտրութիւնը մօտաւորութիւն կայ նշանակելու յունվարի սկզբներում: Իսկ Դումայի անդամների ընտրութիւնը յունվարի վերջերում: Բաւականին սուր վիճաբանութիւններ է առաջ բերում ընտրողական ժողովների հարցը: Հարց է յուզված ընտրողներին բաժանել յատուկ թերթիկներ, որոնք կարող են ծառայել իբրև վկայութիւն նրանց ընտրողական իրաւունքի, այն պայմանով, որ այդ թերթիկներով իւրաքանչիւր անգամ նրանք ներկայ լինեն ընտրողական ժողովներին, առանց թերթիկների իրաւունք չունենան յաճախելու: («Вѣкъ»)

—Նոյեմբերի 12-ին կայացել է ժողովրդական ազատութեան կուսակցութեան Պետերբուրգի նահանգական կոմիտէի նիստը նահանգի բոլոր քաղաքների և 5 գաւառների ներկայացուցիչների մասնակցութեամբ: Նիստի գլխաւոր զբաղմունքն է եղել Պետական Դումայի ընտրութիւնները: Միևնոյն ժամանակ ժողովում կարդացվել են մի քանի զեկուցումներ տեղական ազգաբնակութեան տրամադրութեան մասին, որոնցից երևում է, որ չը նայելով սենատի բացատրութիւններին և այլ դրա նման սահմանափակումներին, այնուամենայնիւ Պետական Դումայի առաջիկայ ընտրութիւնների ժամանակ ժողովրդական ազատութեան կուսակցութեանը լիակատար աջողութիւն է սպասում: («Вѣкъ»)

—Պետական Դումայի առաջիկայ ընտրութիւնների նախապատրաստութիւնները ճենապակու գործարանում սկսվել են նրանով, որ ադմինիստրացիան պահանջել է բանւորներից, արձակելու սպառնալիքի տակ, գրաւոր թուղթ, որ նրանք չեն մտնելու ոչ մի կուսակցութեան կամ Դաշնակցութեան մէջ, ոչ մի պրօպագանդա չեն մղել և կը մատնեն նրանց, որոնք կը նկատվեն ագիտացիա անելիս: Ադմինիստրացիան իր հաշւով բանւորների համար ստանում է «Զօրկա» բէակցիօն լրագիրը:

### ԳՈՐԾ ՉԸ ԿԱՅ

Բալախանի, 20 նոյեմբերի

Սիւնիքի գաւառի մի քանի գիւղեր պատելով, խորը խոցված նրանց դառն և ողբալի դրութիւնից, ես եկայ նաւթային աշխարհը, Բալախանի: Ահա ինչ... Բալախանիի փողոցները լցված տեսայ գործազուրկների մի ահագին բանակով, որոնցից շատերը նոյն գիւղացիներից էին, որտեղ ես պտտել էի և տեսել նրանց ամեն մէկի խղճալի դրութիւնը: Մէկ օր ես Բալախանիի նաւթոտ փողոցով անցնելիս տեսայ մի խումբ մարդիկ, տրեխներով, իրանց գիւղական հագուստով, ծանր քայլերով գնում էին:

—Դէպի ո՞ւր, եղբայր,—հարցրի այդ մերկ և սոված գիւղացիներին...

—Դէպի նաւթահանքերը,—պատասխանեցին նրանք:

—Ինչի՞...

—Գործ խնդրելու կառավարիչներից...

—Գործ շատ դժուար կը գտնէք, յետ դարձէք, եղբայր, մեղք էք, ի զուր ձեր կեանքն այս նաւթոտ և մռայլ աշխարհում մի մաշէք...

—Չէ, եղբայր, մենք պէտք է պտտենք ամբողջ Բալախանին. բոլորն էլ այստեղից են փող աշխատում. երեխեքս տանը սոված եմ թողել, հաց չունեմ. գնամ աշխատեմ, որ ուտեմ, պահեմ, պարտքերս տամ...

Պատասխանում է ու գնում...

Հիմա նրանք սոված, ծարաւ, յուսահատ՝ Բալախանիի նաւթոտ փողոցները պտտելով, որտեղ դիմում են՝ միայն մերժումներ են ստանում. ո՞ւր գնան, ո՞ւմ դիմեն, կամ որտեղից մի կտոր չոր հաց ճարեն, որ նրանով կարողանան ապրել: Սակայն այդ խեղճ թափառական դարձած գիւղացիները իրանց ետևում թողել են սոված, ծարաւ, տկլոր ընտանիքն ու զաւակները, որոնք անհամբեր սպասում են նաւթոտ կօպէկներին: Բայց ի զո՞ւր...

—Պարոն կառավարիչ, գլխիդ, արևիդ մատաղ, խոխերքս սոված եմ թողել եկել, խեղճ եմ՝ ինձ մի գործ տուր: Պարոն կառավարիչը ճղրթալով ոտք գետնին է խփում և ասում.—«Կորիր, հեռացիր, գործ չը կայ: Եւ չիմանալով խեղճի դրութիւնը, նստում է կառքը և հրամայում կառապանին քշել դէպի նաւթահանքը, իսկ խեղճ գիւղացին մնում է ձեռքերը ծալած մտածելիս: Եւ այսպէս՝ խեղճերը որտեղ դիմում են, միշտ մերժումներ են ստանում: Այսպէս թափառում են, դառնում են մի աւելորդ բեռ իրանց բախտաւոր գործատէր բանւոր եղբայրների գլխին ու էլի սպասում, թէ տեսնեն, որտեղից է մի լոյս կը ծագի, մի դուռը կը բացվի: Այժմ գալիս են նոյն իսկ ամբողջ ընտանիքներով, երեխաներով, մոռացութեան տալով ինքնապաշտպանութեան գործը: Գալիս է գիւղացին փայլուն յոյսերով նաւթի աշխարհը իր թշուառ ընտանիքի մերկ ու քաղցած զաւակների օրվայ պարէնը հայթայթելու: Խե՜ղճ սիւնեցի, խե՜ղճ:

Բագրատ Միքայէլեան

### «ՄՇԱԿ» ԼՐԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆԸ

Մի առաջարկ

«Մշակի» № 250-ում «Սեղրակեանի վերջին օրերը» յօդուածում կարդացի, որ սրբազան հանգուցեալից մնացել է 8 հատ վիճակախաղային տոմսեր և 2 մուրհակ 2000 րուբլու:

Երբ 1889 թւին, հանգուցեալ վեհափառութեան օրով, նա թողնում էր Վրաստանի և Իմէրէթի հայոց թեմը՝ Թիֆլիս քաղաքի հայութիւնը, իբր երախտագիտութեանը նշան, բոլոր արգական ցոյցերից յետոյ՝ նուէր բերեց նրան մի գումար, իբր 7000 րուբլի, խնդրելով ընդունել այն ի գործադրութիւն՝ նախ իր առողջութիւնը խնամելու և երկրորդ իր երկասիրութիւնները տպագրութեամբ ի լոյս ընծայելու:

Այն օրից նա, ի միջի իր բազմաթիւ զբաղմունքների, հրատարակեց «Ամուսնական խնդիրները», «Արարատեանի կեղծիքը», «Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեան», «Քահանայական խնդիրը» և «Պատկերայարգութիւնը հայոց եկեղեցում» ստուար աշխատութեան առաջին գիրքը: Նա այժմ էլ ունի, գրեթէ, տպագրելի կարևոր երկեր:

Մօտերքումս լսեցի նրա ծանօթներից մէկից թէ նա անձեռնմխելի է պահել վերոյիշեալ գումարը: Թւում այդպէս է, թէև ինձ յայտնի է դրա մի մասի գործադրութիւնը: Եթէ սխալ չը կայ յիշեալ ասութեան մէջ, ապա պէտք է ընդունել, որ նա գործադրած գումարը յետ իր տեղն է դարձրել գրքերի վաճառքից գոյացած արդիւնքից և կամ իր ռոճկից յետ պահելով:

Ինչևէ, այժմ մէջտեղում կայ, որպէս ցուցված է «Մշակ»-ում, մի գումար: Եթէ բազմավաստակ աշխատաւորը աւանդ չէ թողել թէ ի՞նչպիսի նշանակութիւն պէտք է տալ դոյն գումարին, ապա իրաւունք և արդարութիւն, ըստ իս, պահանջում են, որ նախ այդ դրամը յատկացվի նրա անտիպ երկերը ի լոյս ընծայելուն, և երկրորդ՝ ի նկատի ունենալով նրա հասարակ օգուտ ձգտումները, որոնց շօշափելի ապացոյցը նա բազում ուրեք տուել է, նրա արդէն տպել տուած և այսուհետև տպվելի երկերից գոյացած դրամները յատկացնել, ի յիշատակ նրա, այն դրական հիմնադրամին, որի գաղափարը ժամանակից ի վեր կայ, բայց մարմնացումը տակաւին սպասվում է:

Ա. Մ. Նզեկեան

Ախալցխա, 16 նոյեմբերի

### ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ղարաքարա գիւղ, (Ղափանի շրջանում), նոյեմբերի 16-ին. Լրագրութեանը յայտնի է Ղարաքարա գիւղի աւերումը, սակայն այդ գիւղը, հեռու գտնվելով գիտութեան աշխարհից, անզօր է գտնվել իր ցաւերի մասին յայտնել լրագրութեանը:

Ղափանի ընդհանուր շրջանում այդ փոքր հայկական գիւղը բացառութիւն է կազմել իր արդիւնաբեր հողով: Լրանում է 30—35 տ. այդ գիւղի կառուցման. այդ փոքր ժամանակամիջոցում 3—4 տանը բազմանում հասնում է 33—35 տան: Եւ ահա օգոստոս ամսի արիւնոտ օրերում նա ևս արժանացաւ այդ սև բախտին:

Չը մոռանամ այստեղ փոքր կանգ առնել և պատմել մեր պ.պ. դաշնակցականների գործունէութիւնից: Երբ որ գիւղը պաշարվում է, սուրհանդակը առաւօտեան ժամի 8-ին նամակը հասցնում է 20 վերստի վրա գտնվող հայկական գիւղը, որտեղ լինում է ներկայումս կազմից վռնդված պ. Եապօնային իր խմբով: Այդ պարոնը, ունենալով ղարաքարացիների հետ անձնական ոխ, ոչ մի ուշադրութիւն չէ դարձնում սուրհանդակի նամակին, մնում է մինչև երեկոյեան ժամի 6-ը: Գիւղի կռւող այժը լինում է 7 հոգի, որոնցից երկուսը վիրաւորվում են, իսկ մնացեալ 5 հոգին կարողանում են պաշտպանվել մինչև ուշ գիշեր: Յեղափոխական այդ պատուելի ներկայացուցիչները թող այժմ իրանց մեղքերի հաշիւը ներկայացնեն թշուառացած 35 ընտանիքներին:

Հայրենակից եղբայրներ, այս է մեր դրութիւնը, օգնեցէք խնդրեմ: Մինչև այսօր ոչ մի տեղից նիւթական օգնութիւն չէ եղել, բացի եղբայրք Մելիք-Քարամեանցների Տիրմեղից ուղարկած 300 րուբլին, որին յայտնում եմ իմ խորին շնորհակալութիւնը:

Աշունն ամբողջապէս անցել է, իսկ ղարաքարացիները սերմ չունենալով զուրկ են աշնանա ցանքերից: Կառավարութեան կողմից նոյնպէս ոչ մի նիւթական օգնութիւն չէ եղել:

Հարկաւոր է ամեն կերպ օգնութիւն անճարացած կարօտեալներին, որոնք ներկայումս թափառում են Ագարակի փողոցներում մուրալով մի կտոր հաց:

Երևանից բժիշկ Վարդան Թորոսեանը գրում է, որ իր ծանօթների և բարեկամների շրջանում աջողեցրել է հաւաքել 400 րուբլի, ուղարկելով Թիֆլիս Նպաստամատոյց յանձնաժողովին, դրանից 300 ր. ուղարկելու ղարաքարացիների համար, իսկ 100 ր. քաջարանցիներին: Ուստի խնդրում ենք գթառատ խմբագրութեանդ՝ ինչքան կարելի է միջոցներ ձեռք առնել, շուտափոյթ հասցնելու յիշեալ գումարը Գորիս ուր հարկն է՝ բաժանելու ըստ պատկանելոյն: Սակայն այդ գումարը կարող է մի ամսվայ կերակուր լինել կարօտեալներին: Յայտնում եմ փաղօրօք պ. բժիշկ Վարդան Թորոսեանին ի դիմաց ղարաքարացիների իմ խորին շնորհակալութիւնը:

Գարեգին Մելիք-Քարամեանց

### ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԿՈՄՍ ՀԷՅԴԷՆԻ ՀԵՏ

«Бирж. Вѣд.»-ում տպված է կոմս Հէյդէնի հետ եղած խօսակցութիւնը, որի ժամանակ կոմսը այն հարցին թէ ճշմարիտ են, արդեօք, այն լուրերը, որ իբր կոմս Վիտտէն խաղաղ վերածնութեան կուսակցութեան թեկնածու է համարվում, պատասխանել է հետևեալը. «դրա շուրջ ասել չեմ կարող: Մեզ մօտ կոմս Վիտտէի անունը նոյնիսկ բնաւ չէ յիշվել»:—Բայց գուցէ այդ լուրը բղխում է հէնց կոմսից.—գիտէք, պատասխանել է կոմս Հէյդէնը, առածն ասում է. «բոշան վճռեց ամուսնանալ թագուհու հետ, նշանակում է գործի կէսը արած է: Բոշան համաձայն է, դանդաղումը մնացածն թագուհուցն է»: Եթէ կոմս Վիտտէն չի հրաժարվի պատգամաւոր դառնալու խաղաղ վերածնութեան կուսակցութեան դրօշի տակ, —որի համար թէև ես կասկածում եմ,—դեռ դա քիչ է: Մեզ մօտ, կրկնում եմ, կոմս Վիտտէի մասին նոյնիսկ խօսակցութիւն չէ եղել:

—Ի՞նչ դրութեան մէջ է գտնվում այն հարցը, թէ Մ. Ա. Ստախովիչը ինչպիսի դիրք է բռնելու դէպի խաղաղ վերածնութեան կուսակցութիւնը: Ճշմարիտ է, արդեօք, որ նա միաժամանակ շարունակում է մնալ և՝ հոկտեմբերի 17 ի դաշնակցութեան, և՝ խաղաղ վերածնութեան կուսակցութեան մէջ:

—Կարծում եմ, որ դա սխալ է: Ստախովիչը դեռ մի քանի օր առաջ ցանկութիւն յայտնեց մտնել մեր կուսակցութեան կենտրոնական կոմիտէի կազմի մէջ, որ մասին մենք կրկնակի հաղորդեցինք քաղաքացիներին: Նա անդամավճար է տուել, և յայտնել է, որ Օրլովում կուսակցութեան բաժին է կազմակերպում: Ճիշտ է, նա ասել է որ, կարող է պատահել որ, տեղում որևէ համաձայնութիւն կապէ մնացած սահմանադրական կուսակցութիւնների անդամների հետ, սակայն նա այդ բանի համար իրաւունք ունի: Անհրաժեշտ է միայն, որ այդ թեկնածուները անկեղծ սահմանադրականներ հանդիսանան: Շատերին խռովութիւն պատճառեց Ստախովիչի այն հեռագիրը, որ ուղարկված էր հոկտեմբերականների միտինգին: Ես այդ հեռագիրը չեմ կարդացել, բայց ինձ յայտնեցին, որ Ստախովիչը այդ հեռագրով համակրութիւն է յայտնում իսկական և անկեղծ սահմանադրականներին: Այդպիսի հեռագիր կարող է ուղարկել և իւրաքանչիւր կադէտ: Անկեղծ սահմանադրականութեան համակրանքը միայն գովեստի է արժանի»:

Հոկտեմբերականների վերջին միտինգի առիթով կոմս Հէյդէնը ասել է հետևեալը.

—Ինձ առանձնապէս զարմացրեց Գուչկովի արտասանած ճառը: Սկզբում նա թեքվում է դէպի աջ և խօսում է աջակողմեան կուսակցութիւնների հետ հաշտվելու անհրաժեշտութեան մասին, իսկ ճառի վերջում նա մատնանշում է, որ անկարելի է աշխատել բէակցիօներների հետ: Շատ տարօրինակ երկուութիւն. իսկ մինչդեռ դաշնակցութեան անդամներից շատերը, ասես, մարսում են այդ ամենը, և նշանակութիւն չեն տալիս այդ օրինակ էական հակասութիւններին»:

Խօսակցութեան վերջում կոմս Հէյդէնը իր կարծիքն է յայտնել ադմինիստրացիայի վարմունքի մասին, որ արգելում է ժողովրդական ազատութեան կազմած ժողովները: «Նախ և առաջ—ասել է Հէյդէնը,—կադէտային ժողովներ արգելելը մեզ էլ է զրկում ժողովներ կազմակերպելու և ագիտացիա մղելու հնարաւորութիւնից: Մենք անյարմար ենք համարում օգտվել ժողովների իրաւունքով այն ժամանակ, երբ մեր քաղաքական մրցակիցները զրկված են այդ իրաւունքից: Երկրորդ, ադմինիստրացիայի քաղաքականութիւնը ներկայանում է միայն ժողովրդական ազատութեան կուսակցութեան օգտին. նա ժողովրդականացնում է հասարակութեան համակրութիւնը դէպի նա և ընդլայնում է ձայների աղբիւրը առաջիկայ ընտրութիւնների համար: Չէ՞ որ պարզ է, որ երբ մէկ անգամ կադէտների դրօշակի վրա գրված է «կռիւ», ուրեմն որքան ուժեղ կերպով կառավարութիւնը ստիպէ նրանց վարել այդ կռիւը, այնքան աւելի աջողութիւն կունենան նրանք հասարակութեան մէջ: Կառավարութիւնը չէ կամենում հասկանալ այս բանը, ինչպէս չէ կամենում հասկանալ, որ նրա առաջին քայլը պէտք է իր համար վստահութիւն որոնելը լինի, իսկ նա անում է ամեն բան, որպէսզի անվստահութիւնը ուժեղացնէ»:

### ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ ՋԻՎԱՆՇԻՐՈՒՄ

Մարգակերտ գիւղ, նոյեմբերի 25-ին

Կատարեալ հաշտութիւն է: Ահա ինչ է մտածում մարդ առաջին տպաւորութեան տակ: Հայ և թուրք խառն միմեանց հետ, նզովելով «չէյթանին», իրանց հոգսերն են քաշում: Փոքր առ փոքր հայ և թուրք հարևան գիւղօրայքի մէջ երթևեկութիւնը սկսվել է: Թուրքերը ուղտերով շարան-շարան նաւթ են բերում մեզ մօտ ծախելու: Թարթառի շուկան բաց է և կենդանութիւն է ստանում: Երկարատև բոյկօտից յետոյ սկսվել է առևտուրը թշնամի դրացիների միջև:

Դեռ անցեալ ձմեռվայ կռւից փախած և Տաւարակում ապրող թուրք «քոլանի» ցեղերը բարձրանում են իրանց քարուքանդ եղած գիւղերը վերանորոգելու նպատակով: Հայերը դեռ չեն վստահանում գնալ իրանց գիւղերը: (Բացառութիւն են կազմում մի քանի տուն սէյսուլանցիներ): Դառն իրականութեան դասերը ցոյց տուեցին, թէ ինչպիսի դաւաճան հարևան ունենք ի դէմս թուրքերի: «Քոլանին» կամաց-կամաց բարձրանում է իր ծննդավայրը, իսկ սարովեցին իր նոր գնած հողը ջուր հանելու համար արիւնքրտինք է թափում: Թուրքը գալիս է հաստատվելու իր առաջվայ տեղը, հերկելու ու ցանելու իր արտը, իսկ սարովեցին տասնեակ տարիներ պէտք է փողի տոկոսներ վճարէ հողատիրոջը: Զլատված սրտով տեսնում է այս բոլորը սարովեցին, մտածում և համեմատում է նա իր ճոխ անցեալը և թշուառ ներկան: Դեռ անցեալ տարի հարուստ և ազատ կեանք վարող սարովեցին, այդ ըմբոստ ոգին, մնացել է վիզը ծուռ, ձեռքը ծոցում իր սև օրը լալիս: «Չորս օր և չորս գիշեր կռիւ մղեցինք ահագին օրդաների դէմ, և ոչ ոք մեզ օգնութեան չեկաւ: Անջատված էինք բոլոր հայ գիւղերից և յուսահատական էր մեր կռիւը: Կրակի միջից մի կերպ դուրս եկանք. էլ կրկին չենք գնայ կրակի մէջ մտնելու»: Ահա այս է պատասխանում սարովեցին այն հարցին, թէ ինչու նրանք չեն գնում իրանց ծննդավայրը:

Եւ նա արդարացի է:

Ի՞նչ սրտով նա գնայ հարևանութիւն սկսի այն թուրքի հետ, որի ձեռքով նա թափառական դառաւ: Ի՞նչպէս նա նստի մէկ սեղանի այն թուրքերի հետ, որոնց հարիւրաւոր զաւակներին նա գերեզման փորեց գնդակահար անելով կռւի ժամանակ: Շատ թանգ նստեց Սարովը թուրքերին: Միայն սպանվածների թիւը նոյն իսկ իրանք թուրքերը չորս հարիւր (400) են հաշւում: Սրանից յետոյ թուրք և հաշտութիւն Ջիվանշիրի տափարակում—դա մի անհեռակայելի բան է:

Խիստ պատւաւոր է սարովեցին: Թուրքի ամեն մի վիրաւորանքին նա կը պատասխանի գործով, և սա կարող է վատ հետևանքներ ունենալ: Այս բոլորը հասկանում է սարովեցին և չէ գնում իր գիւղը: Սրանից յետոյ պէտք էր սպասել սարովեցու կողմից յուսահատված մարդու թշնամութիւն դէպի վերև բարձրացող «քոլանի» թուրքերը: Բայց բարեբախտաբար նրանց կողմից ոչ մի թշնամական քայլ չը կայ դէպի թուրքը:

Հաշտութիւն է:

Եւ այդ հաշտութիւնը յարատև կարող է լինել միայն, եթէ թուրքերը անցեալների պէս ազատութիւն չը տան իրանց զօրային և աւազակային կրքերին:

Հաշտութիւն է ուզում հայը և սիրով է ընդունում իր անցեալ ձմեռվայ թշնամուն:

Հաշտութիւն է ուզում հայը, միայն թէ այդ հաշտութիւնը լինի մշտական և ոչ ժամանակաւոր:

Եթէ թուրքերը սկսեցին կրկին իրանց պապական սովորութիւնը, այն է՝ գողութիւնը, և կառավարութիւնը առաջվայ պէս մատների արանքով նայեց այդ բանի վրա, այն ժամանակ հայը հարկադրված է լինելու ինքը պաշտպանել իր սեփականութիւնը: Իսկ այդպիսի դէպքերում, ի նկատի ունենալով ներկայ տրամադրութիւնը, կարող է մի չնչին բանի համար, նոյնիսկ մի ոչխար գողանալու պատճառով, ընդհարումն առաջանալ, որը թէ կը կլանի ամբողջ գաւառը և թէ կորուստները կը լինի երկու կողմերի համար էլ:

Անցեալ ամառում, երբ գաւառապետի օգնականի հրամանով հայ և թուրք ներկայացուցիչները հաւաքվել էին Թարթառ աւանը հաշտութիւն կապելու համար, հայ ներկայացուցիչներից մի քանի հեռատես անձինք կառավարութեան ուշադրութիւնը հէնց այդ բանի վրա դարձրին: Թուրք խաները և բեկերը, որոնք նոյնպէս ներկայ էին ժողովին, գաւառապետի օգնականի հարցին—արդեօք, նրանք վստահ են, որ իրանց կրօնակիցները անցեալների պէս չեն կրկնելու գողութիւնը — ոչ մի դրական պատասխան չէին տուել: Դրանից յետոյ հայերը անզօր հեռացել էին ժողովից:

Մինչև այժմս էլ խելացի մարդիկ խաղաղութիւն չեն գուշակում ապագայում:

«Ինչո՞ւ թուրք ղեկավարները մի դրական պատասխան չը տուեցին գողութեան մասին: Ախր, դրանցից է կախված թուրք ազգի մասսայի գործողութիւնը: Ինչո՞ւ թուրքերը, բարձրանալով իրանց բնակավայրերը, չեն ցրվում առաջվայ տեղերը, այլ համախմբվել են մի երկու տեղ. չը լինի՞ թէ դրանք եկած են ժամանակաւորապէս դիրք բռնելու հայ գիւղերի մէջ, որ խանգարեն դժբախտ դէպքերի ժամանակ հայերին՝ օգնութեան գնալու սարերից իրանց տափարակում ապրող եղբայրներին»:

Ահա հարցեր, որոնք յաճախ լսվում են հայ գիւղացու բերանից, և այս բոլորը առիթ է տալիս հային մտածելու, թէ դեռ խաղաղութիւն չը կայ կատարեալ և մեզ օրօր են ասում անուշ քնեցնելու, որ մի գեղեցիկ ժամանակ... սկսեն:

Ինչ և իցէ. մենք հայերս կողմնակից ենք հաշտութեան և կը ցանկանք, որ մեր հարևանները լինեն անկեղծ: Այն ժամանակ մենք ևս անկեղծօրէն ձեռք կը մեկնենք մեր «քիրւաներին», կը նզովենք չէյթանին, որը այնքան չարիք պատճառեց բոլորիս, և կասենք. «Եղբայր թուրքեր, բաւական է, վերջ տանք այս անմիտ կոտորածներին. գազանացանք միմեանց յօշոտելով և միմեանց արիւն խմելով: Ամբողջ մի սերունդ արեան մէջ է մեծանում և արիւն տեսնում: Ի՞նչ կարելի է սպասել մի այդպիսի սերունդից, եթէ ոչ, այն, որին մենք ենք ներկայումս ենթակայ: Բաւական է. մոռանանք անցեալը, չը կուրանանք անասնային կրքերից և ձեռք-ձեռքի տուած գործենք յանուն Կովկասի ընդհանուր շահերի:

«Ի՞նչ շահեցինք այս աննպատակ կռիւներից. հարիւրաւոր հիւղեր ու քաղաքներ հրդեհված, հազարաւոր երիտասարդ ույժեր վաղաժամ գերեզման գլորված, հարիւրաւոր որբ երեխաներ փողոց նետված և հազարաւոր մարդ ու կանայք սովից թափառական դարձրած»:

Ահա արդիւնքը և սև պատկերը մեր այդ աւերիչ կոտորածների:

Բաւական է. եղէք անկեղծ:

Այդ ժամանակ միայն կը հաստատվի խաղաղութիւնը մեր գաւառում:

Լ. Մ.

### ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

V

Միապետական և պարլամենտական արիստոկրատիզմ

Այդպէս էին Եւրոպայի զարգացման էական գծերը 17-րդ և 18-րդ դարերում: Բայց կային և բացառութիւններ: Մի քանի երկրներում թագաւորական իշխանութիւնը չը կարողացաւ համայնական ժողովները ոչնչացնել, և այդպիսի տեղերում այդ ժողովները արդէն իրերի դրութեան տէրը դարձան: Անգլիան իրանից ամենաաչքի ընկնող մի օրինակ է ներկայացնում այնպիսի երկրներից, ուր թագաւորների ինքնիշխանութեան ձգտելու տենդենցիան չէզոքվում է ընդհանուր օրէնքից:

Այն պատճառները, որոնց շնորհիւ Անգլիան այդ կողմից բացառութիւն կազմեց, շատ բազմազան էին: Նրանցից ամենագլխաւորները մենք համարում ենք հետևեալները: Այն է՝ 17-րդ դարի վերջում, երբ աբսօլիւտիզմը պէտք է Անգլիայում իր վերջին վճռողական կռիւը մղէր, անգլիական թագաւորական իշխանութիւնը սկովտիական թագաւորների ձեռքը անցաւ, որոնց պետութիւնը իրանից տնտեսապէս այնպիսի յետամնաց շրջան էր ներկայացնում, ուր դեռ ցեղային կազմը պահպանվել էր իր ամբողջութեամբ, և թագաւորներն էլ դեռ ևս համայնքների կատարեալ ազդեցութեան տակ էին գտնվում: Ամբողջ 17-րդ դարի ընթացքում Սկովտիան էր Ստիւարտների տան թագաւորների թուլութեան պատճառը, որոնք Անգլիայում անսահման իշխանութեան էին ձգտում ճիշտ այնպէս, ինչպէս որ Ունգարիան էր, մինչև վերջին ժամանակներս, շարունակ արգելք հանդիսանում Հաբսբուրգների ինքնակալական ձգտումներին:

Աւելի ևս մեծ նշանակութիւն ունէր Անգլիայի կղզիական դրութիւնը: Նրա ույժն ու պաշտպանութիւնը ոչ թէ ցամաքային զօրքն էր կազմում, այլ նաւատորմիղը: Այդ պատճառով էլ, ապրանքներ պատրաստող ու նրանց վաճառականութեամբ պարապող, բուրժուազիան ոչ մի հիմք չունէր միապետների զօրաւոր ու մշտական ցամաքային զօրք ստեղծելու ձգտումները պաշտպանել: Անգլիան զրկված էր բանակաստեղծութեան այդ ամենահաւատարիմ զէնքից անսահման իշխանութեան համար մղված կռւի վճռական ժամանակներում: Բայց Անգլիայի կղզիական դրութիւնը շատ մեծ նշանակութիւն ունեցաւ և այն պատճառով, որ 16-րդ դարից սկսած,—երբ դէպի Հնդկաստան ծովային ճանապարհ և Ամերիկան գտնվելուց յետոյ, եւրոպական վաճառականութեան կենտրոնակէտը Միջերկրական ծովի ափերից տեղափոխվեց Ատլանտեան ովկիանոսի ափերը—Անգլիայում մասնաւորապէս նպաստաւոր հանգամանքներ ստեղծվեցին արդի կապիտալիստական բուրժուազիայի զարգանալու համար: Առաջին ժամանակներում Անգլիան Պորտուգալիայի, Սպանիայի, Հոլանդիայի ծաղկած համաշխարհային վաճառականութեան մէջ մասնակցում էր միայն ծովի վրա աւազակութիւններ անելով, որից մանաւանդ սաստիկ տուժում էր սպանական նաւատորմիղը: Շուտով Անգլիան արդէն այն աստիճան ուժեղացաւ, որ այլևս կարող էր փոքր ինչ ձեռնարկութեան մէջ դնել իր կողոպտիչ գործունէութիւնը. նա ինքն էլ սկսեց կօլօնիաներ նուաճել և ընդարձակ անդրովկիանեան վաճառականութիւն զարգացրեց, բայց, ի հարկէ, ոչ այն վաճառականութիւնը, որ հիմա օրինական են անուանում, այլ գլխաւորապէս մաքսանենգային և գերիների վաճառականութիւնը: Լօնդոնը արագութեամբ զարգացաւ և համաշխարհային կենտրոնը դարձաւ, գերազանցելով Լիսաբոնին և Անտվերպենին. 17-րդ դարի վերջում, վաճառականութեան տեսակէտով, նա միայն մէկ մրցակից ունէր՝ Ամստերդամը: Իր բնակիչների քանակով նա այն ժամանակն էլ արդէն առաջին տեղն էր բռնում եւրոպական մեծ քաղաքների մէջ. Նրա մէջ հաշւում էին մինչև 500,000 բնակիչ: Բացի դրանից նա մի բաւականին պատկառելի քաղաքային միլիցիա ունէր: Բայց դրա հետ մէկտեղ Լօնդոնը աւելի նուազ ճոխութեան ու շքեղութեան քաղաք էր, քան Պարիզը. նրա ծաղկումը աւելի վաճառականութեան զարգացումից էր կախված, քան արքունիքի և պալատականների շռայլութիւնից: Նա զօրաւոր կառավարութիւն ունենալու կարիք էր զգում իր շահերը պաշտպանելու համար ոչ թէ պետութեան ներսում, այլ արտասահմանում: Մինչդեռ Ստիւարտները իրանց ամբողջ ույժը գործ էին դնում իրանց անսահման իշխանութիւնը հաստատել կարողանալու համար ու բոլորովին հոգ չէին տանում զօրաւոր արտաքին քաղաքականութիւնը պաշտպանել, որպէսզի Անգլիայի համաշխարհային վաճառականութիւնը պահպանվէր ու զարգանար:

Անգլիական և, մանաւանդ, Լօնդօնի բուրժուազիան արդէն այն աստիճան ուժեղ, համարձակ և ինքնավստահ էր, որ նա հանգամանքների սովորականութիւնից դրդված դեռ 17-դ դարի մէջում, դաշնակցելով ազնուականութեան մի մասի, նոյնպէս և մանր բուրժուազիայի և գիւղացիութեան մնացորդների հետ, խիզախեց պատերազմ յայտարարել թագաւորական իշխանութեանը, որը յենւում էր ազնուականութեան միւս մասի և պալատական հոգևորականութեան վրա: Բուրժուազիան յաղթեց այդ կռւի մէջ, բայց այդ յաղթութեան հետևանքը այն եղաւ, որ մանր բուրժուազիայի և գիւղացիութեան մի ամբողջ բանակի դիկտատուրա ստացվեց:

Այստեղ նոյնը պատահեց, ինչ որ յետագայում կրկնվեց Ֆրանսիական յեղափոխութեան ժամանակ և 1848 թւականին կօնտինենտի վրա. բուրժուազիան, աշխատաւոր դասակարգերի դիկտատուրայից սարսափած, նորից թագաւորական իշխանութեան և նրա յենարան կանգնած պալատական ազնուականութեան գիրկը նետվեց *): Նա դաշնակցութեան մէջ մտաւ հողատէր ազնուականութեան հետ, և այդ դաշնակցութիւնը տևեց մինչև ֆրանսիական յեղափոխութիւնից յետոյ և մինչև իսկ անքակտելի մնաց մինչև 19-րդ դարի առաջին տասնամեակը: Անգլիայի խոշոր հողատիրական ինքնուրոյն բնաւորութեան ստացած ձևը պատճառ եղաւ, որ խոշոր բուրժուազիան կարողացաւ այդչափ երկար ժամանակ դաշնակցութեան մէջ մնալ խոշոր հողատէրերի հետ: Կարմիր և սպիտակ վարդի երեսնամեայ քաղաքացիական պատերազմը համարեա թէ բնաջնջեց արեան բարձրագոյն ազնուականութիւնը: Նրա աւերակների վրա ծագեց նոր ազնուականութիւնը—խոշոր հողատէրերը: Այդ ազնուականութիւնը ստեղծողը Հէնրիխ VII-ը եղաւ, որը վերջ դրեց քաղաքացիական պատերազմին: Հէնրիխ VIII-ը և նրա որդին, Էդուարդ VI-ը, ազնուականութեան այդ նոր խաւը բազմացրին և հարստացրին ի հաշիւ եկեղեցու, գիւղերի և հիւանդանոցների, որոնց կալուածները գրաւեցին: Խոշոր հողատիրութեան երկրորդ նորոգումը կատարվեց Կարլ առաջինի և պարլամենտի միջև ծագած քաղաքացիական պատերազմի շնորհիւ: Ազնուականներից շատերը այդ ժամանակ կորցրին իրանց կալուածները, մասամբ գլխատումների, իսկ մասամբ էլ աւերումների ենթարկվելու պատճառով: Նրանց կալուածները հարստացած բուրժուաների ձեռքը անցան: Ստիւարտների բռնաւորացման ազնուականներից շատ քչերին վերադարձրեց նրանց այն կալուածները, որ կորցրել էին քաղաքացիական պատերազմի ժամանակ: Ոչ մի զարմանալու բան չը կայ, որ անգլիական հողատէրերը բոլորովին տարբեր դուրս եկան, քան կօնտինենտի արիստոկրատիան էր, օրինակի համար, Ֆրանսիայում: Այս վերջինը պահպանում էր ֆէօդալական ժամանակների տրադիցեան և արհամարհանքով էր վերաբերվում արդիւնաբերող և առևտրական դասակարգերին: Փող վաստակելը այդ արիստոկրատիայի շրջաններում արատ էր համարվում: Նրա կալուածներից ստացվող հասոյթները գնալով նուազում էին, որովհետև պատւասիրութեան նուրբ զգացումը նրան թոյլ չէր տալիս ռացիօնալ հողագործութեան մասին հոգ տանել: Բայց այդ նոյն զգացումը նրան չէր խանգարում իր դեֆիցիտները ծածկել մուրացկանութեամբ (թագաւորից), գողութեամբ (գանձարանից) և պարտքերով (կապիտալիստներից): Այդ արիստոկրատիան կատարելապէս սնանկացաւ 18-րդ դարի ընթացքում:

### ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԴԵՄԱԳՈԳԻԱՅԻ ԱՐՀԵՍՏԱՒՈՐԻՆ

II

Եթէ մի տպաւորութիւն կար, որ թողեց մեզ վրա պ. Աթաբէկեանի «Մի գրական թալանի առիթով» («Երկիր» №№ 14, 15) «քննադատական» յօդուածը, դա այն գռեհկութեան զգացմունքն էր, թէ ինչպէս մի պարոն, որ ապականված դեմագոգիան իր կեանքի հարազատ արհեստ է դարձրել անզգօրէն շահագործում է գաւառական անգիտակից մասսայի զգացմունքները իր սնամէջ ֆրազեօլօգիայով և ճահճացած նացիօնալիզմով, վերջապէս ծակուծուկերից դուրս է եկել հրապարակ՝ հակառակորդի պատասխանատուութեան առաջ:

Willkommen,—պ. Աթաբէկեան, ձեր առաջին դեբիւտով:

Պ. Աթաբէկեան «նպատակ չունի քննել» մեր գրքոյկը, այլ միայն հայհոյել և հայհոյիչ դատավճիռ կայացնել: Շատ նպաստաւոր կը լինէր նրա համար, ի հարկէ, եթէ մենք ևս նոյն մեթօդով վարվէինք մեր պատասխանի մէջ: Եթէ պ. Աթաբէկեանը առանց քննելու անուանում է մեր աշխատութիւնը «աշակերտական շարադրութիւն», ապա մենք քննելով և ապացոյցներով ցոյց կը տանք, որ նրա «քննադատական» կոչված մանկամիտ արտադրութիւնը նոյնիսկ աշակերտական մրոտումներից ստոր է կանգնած: Մեղաւորը մենք չենք, եթէ փոքր ինչ երկար դուրս գայ մեր պատասխանը, այլ այն հանգամանքը, որ հարկադրում է մեզ ծանրանալ և մերկացնել մեր հակառակորդի ցուցադրած ողջ իդիոտիզմը:

Մենք քայլ առ քայլ կը հետևենք այդ ինտեգրալ իդիոտիզմի այն բոլոր հատուածական մասերին, որոնք պարունակվում են իրանց մէջ դեմագոգ իդեոլոգի «քննադատական» անսպառ պրօֆանացիան:

Նախ դառնանք ամենագլխաւոր կէտին:

Պ. Աթաբէկեան «թալան» կամ պլագիատ է անուանում մեր գրքոյկի մի որոշ մասը: Ճիշտ է նրա ասածը. քննենք և տեսնենք այդ:

Ի՞նչ է նշանակում պլագիատ, որոշենք դրա սահմանները:

Պլագիատ նշանակում է ամեն մի գրուածք, որի տէրը քաղում, յափշտակում է մտքեր, կտորներ և ամբողջ հատուածներ մի այլ հեղինակի որոշ աշխատութիւնից և իր անունով հրատարակում, ինկօգնիտօ պահելով և՛ հեղինակի անունը և՛ նրա գրուածքը: Եթէ «Տնտեսական զարգացման փազերը» բրօշիւրը լինէր պլագիատ՝ արուեստի իր ճիշտ իմաստով, աւելի քան հաւատացած եմ, պ. Աթաբէկեան, որ երբէք չէիք իմանայ «թալանի» բուն աղբիւրը: Ներեցէք, որ այսչափ ցածր կարծիք ունենք ձեր տնտեսագիտական և ընդհանուր հասարակագիտական պատրաստութեան մասին. մենք չեշտում ենք մի իրողութիւն, որ պիտի հաստատենք փաստերով:

Պ. «քննադատին» բաւարարութիւն չէ տուել մեր ներածութեան մէջ արած յայտարարութիւնը, որ մեր ուղեցոյցը լինելու է մեծ մասամբ պրօֆ. Բիւխերի թէօրիան: Halt! ասում է պ. Ա.Թ. «Ի՞նչ է նշանակում ուղեցոյց ունենալ որևէ թէօրիա: Էրնստ Հեկկելը իր բոլոր երկերի մէջ ուղեցոյց է ունեցել Դարվինի զարգացման թէօրիան: Կարլ Կաուցկին իր «Հողային» խնդիրը կազմելու ժամանակ ուղեցոյց է ունեցել Կարլ Մարկսի «Տնտեսագիտական թէօրիան» և այլն»: «Մի

*) Կարելի է ասել, որ մօտաւորապէս նոյն բանը կատարվեց Ռուսաստանում, անցեալ 1905 թ. հոկտեմբերեան յեղափոխական շարժումներից յետոյ: Տ. Թ.

աշխատանք յօրինելու ժամանակ,—շարունակում է մոլորված պարոնը,—ունեցած ունենալ որևէ թէօրիա՝ նշանակում է այդ աշխատանքի մէջ բերած բոլոր փաստերը լուսաբանել այդ թէօրիայի տեսակէտից, կարողանալ ապացուցանել, որ այդ փաստերի վրա յենվող եզրակացական կառուցուածքը գալիս է անվերջ անգամ ամրացնելու կամ այդ թէօրիայի ամբողջութիւնը, կամ նրա այս կամ այն դրութիւնը»:

Այս կտորը մի gemeinplatz է, մի հասարակ, գունեղական գիտելիք, որ ամէն բան միևնոյն գամբիւղը նետող մեր «քննադատը» թուլ-ակելով չի իմացել, թէ ինչու և ի՞նչ դէպքում պէտք է արտայայտել: Ներկայ դէպքում այդ ամբողջ կտորը ներկայացնում է մի բացարձակ, նոյնքան և խայտառակ թիւրիմացութիւն—qui pro quo—որի մէջ խոր թաղված է պ. Աթարէկեանի «քննադատական տախտակութեան ամենախոշոր հատուածը»:

Լաւ լսեցէք, պ. Լ. Աթարէկեան:

Ի. Հէկկելը դարվինիստ է. ի՞նչ է նշանակում այդ: Այդ նշանակում է, որ Հէկկելը կողմնակից ու պաշտպան լինելով այն բնատուական աշխարհահայեացքի, որի հիմնադիրը Դարվինն է, նրա նոր սահմանների և ձևերի մէջ արած իր հետազօտութիւններով, իբրև «գալիս է անվերջ անգամ ամրացնելու այն թէօրիայի ամբողջութիւնը», որը նրա համար ուղեցոյց է եղել: Կ. Կաուցկին մարքսիստ է. ի՞նչ է նշանակում այդ: Այդ նշանակում է, որ նա նոյն ուսումնասիրական-գիտական ծառայութիւնը կատարած է սօցիալական գիտութիւնների սահմանում, առաջնորդվելով մարքսիստական ուսմունքով: Շտամլերը, Շտաուդինգերը, Նատորպը նոր-կանտեականներ են. ի՞նչ է նշանակում այդ: Այդ նշանակում է, որ նրանք ձգտում են աւելի ու աւելի հիմնաւորել նէօ-կանտիզմի պրինցիպները փիլիսոփայական գիտութիւնների մէջ: Վերջապէս պ. Լ. Աթարէկեանը դաշնակցական է. ի՞նչ է նշանակում այդ: Այդ նշանակում է, որ նա շալակում է իր մէջքին Դաշնակցութեան նացիօնալիստական աղբը և ամենուր պատառներով ցրում ու ցանում:

Եթէ ձեր հասկացողութիւնը ազատ լինէր հօտնձացած շաբլօնիզմից, դուք կը տարբերէիք երկու տարր, նոյնքան և տարրական իրողութիւններ միմեանցից:

Դուք գիտէք, յուսով եմ, որ գոյութիւն ունի այսպէս անուանված բիւխերիզմ, բիւխերիստական աշխարհահայեացք, ոչ էլ բիւխերիստ կամ բիւխերականներ: Պրոֆ. Բիւխերը ունի եւրոպ. ազգերի տնտեսական զարգացման փազերը բնորոշող մի սօսկական թէօրիա, որի հետ կարելի է միմիայն երկու կերպ վարվել: Նախ կարելի է նրա թէօրիական սխեման ծառայեցնել իբրև գրադեւոսնը, իբրև ատրիճանաչափ և ուղեցոյց այն դէպքում, երբ մէջը ուսումնասիրութեան օբեկտ է ընտրում տնտեսական ձևերի տեսակէտից տակաւին չը հետազօտված մի երկիր կամ միևնոյն միջավայրի (հէնց Եւրոպայի) թերի մնացած, լաւն չը լուսաբանված կողմը, հաւաքում է անմշակ հում նիւթերը, վեր է առնում սխեմն և Բիւխերի թէօրիան կիրառելով հաստատում, որ այս ինչ երկիրը ունի ներկայ պատմական շրջանում (կամ ունեցել է անցեալում) տնտեսութեան այս ինչ տիրապետող ձևը: Միայն այս դէպքում է, որ Բիւխերի թէօրիայից օգտվողը վարվում է Հէկկելի, Կաուցկու մեթոդով:

Իսկ պ. Աթարէկեանը առանց ինքն իրան հաշիւ տալու, թէ ո՞րն է մեր ընտրած օբեկտը, ի՞նչ է մեր ձեռնարկի նպատակը, ի՞նչ է ասված դրա մասին սկզբում ամենայն բացորոշութեամբ, սպասել է մնալից երեխայական պարզամտութեամբ, որ ինչպէս Հէկկելը ի շահ դարվինիզմի, Կաուցկին ի շահ մարքսիզմի նորանոր գիտական վերլուծութիւններով հիմնաւորում և խորացնում են իրանց մեծ ուսուցիչների թէօրիական կառուցուածքը, մենք էլ ի շահ Բիւխերի թէօրիայի մի նոր թէօրիական նորութիւն աւելինք:

Մեր խնդիրը չէ եղել ոչ հետազօտելու որևէ չուսումնասիրված երկրի տնտեսական ձևերը և ոչ էլ եւրոպ. ազգերի տնտեսական կեանքը այս կամ այն՝ Բիւխերից անուշադիր թողնված խորշը, որպէս զի եզրակացական կառուցվածքով գոցենք ամրացնելու այս կամ այն թէօրիայի (այս դէպքում Բիւխերի) ամբողջութիւնը: Պ. «քննադատ», մի անէք այնպիսի պահանջ այնտեղ, ուր ծիծաղելի է և անմիտ ձեր պահանջը ձեզ հետ միասին:

«Մեր նիւթի ծաւալն է,—ասում ենք մենք ներածութեան մէջ,—նախ համառօտ և քննական դիտողութիւններով յիշատակել տնտեսական զարգացման յայտնի թէօրիաները, ապա փորձ ինչ ընդարձակ շօշափել տնտեսական զարգացման տարբեր փազերը, սկսած պատմական հին անցեալից մինչև նորագոյն կապիտալիստական տնտեսութեան ձևը: Վերջին խնդրում (այսինքն Տնտես. զարգաց. փազերը շօշափելու ժամանակ) մեր ուղեցոյցը լինելու է մեծ մասամբ պրոֆ. Բիւխերի թէօրիան: Սակայն այդ բաւական չէ. 21-րդ երեսում յիշատակելով Բիւխերի գիրքը և այն երեսը, որտեղից սկսվում է նրա թէօրիայի պարզաբանումը, մենք բացէ ի բաց յայտարարում ենք. «Ըստ այդ (Բիւխերի) թէօրիայի պիտի ծանօթանանք մենք տնտեսական զարգացման փազերի հետ»:

Պ. Աթարէկեան, դուք դիտաւորութեամբ էք անմիտ ձևանում, թէ՞ անմիտ էք իրապէս: Ինչպէս էք յանդգնում իբր գրագողութիւն յայտարարել մի գրուածք, որի հեղինակը սկզբից յայտարարում է, որ ըստ այդ թէօրիայի պիտի ծանօթանայ ընթերցողը տնտես. զարգաց. փազերի հետ:

Իսկ ի՞նչ է նշանակում ըստ որոշ ուսմունքի, թէօրիայի ծանօթանալ մի խնդրի, մի պատմական շրջանի, մի երևոյթի, մի հասարակական կազմի հետ: Ի՞նչ է նշանակում, օրինակ, ըստ Մարքսի թէօրիայի ծանօթանալ յաւելեալ արժէքի հետ այնպէս, ինչպէս հիմնաւորված է «Կապիտալ»-ում: Դա նշանակում է ոչ թէ ուղեցոյց ունենալ յաւելեալ արժէքի սօսկ տեսական դէֆինիցիօն (սահմանումը), այլ դա նշանակում է ընթերցողին ծանօթացնել Մարքսի տեսական հիմնաւորման և փաստական լուսաբանութեան հետ, ծանօթացնել նրա թէօրիայի յատկանշական գծերի, կրիտերիումների հետ: Եւ ինչ ասել կուզէ, որ այդ ծանօթացնողը յաճախ «Կապիտալ»-ի կտորներ, թէօրիայի նրբութիւնները և բնորոշ կողմերը բացատրելու համար հատուածներ պիտի բերէ, առանց կարիք ունենալու յաճախ յիշատակելու հեղինակի անունը, երբ նա սկզբից և եթ յայտարարում է՝ պարոններ, մենք ծանօթանում ենք յաւելեալ արժէքի հետ ըստ Մարքսի թէօրիայի, տարրալուծված «Կապիտալ» մէջ: Իսկ եթէ կը գտնվի մէկը, որ առանց ուշադրութիւն դարձնելու հեղինակի յայտարարութեան, գիտութեամբ թէ անգիտութեամբ, կը համեմատէ հրապարակով նմանօրինակ և նոյն կտորները «Կապիտալ» և ծանօթացնող հեղինակի աշխատութեան մէջ և վերջինս կանուանէ նա գրագողութիւն, այն ժամանակ պէտք է այդ պարոնը իր «քննադատութեան» հետ միասին հրապարակով ցուցադրել առնուազը իր անյատակ անբարեխղճութեան և անբուժելի տափակութեան գրաւական վկայագիրը՝ վաւերացնելու համար:

Պ. Աթարէկեանը ցոյց տուեց իր այդ արխարգոյն վկայագիրը իր առաջին անանկ դեբիւտով, որի կատարեալ վաւերացման համար մենք դեռ շատ բան ունենք անելու:

(Կը շարունակվի)

## ԼՐԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

Գորիս, նոյեմբերի 15 ին

Բժիշկը հիւանդին խորհուրդ է տալիս ծանր և դժուարամարս կերակուրով չը ծանրաբեռնել ստամոքսը. իսկ ես, ինչպէս միւս նոյնպէս և մեր գաւառի լրագրականներին խորհուրդ եմ տալիս խոյս տալ ծանր և իրանց գլխի համար անմատչելի վէճերից:

Ապրել ինտելիգենտ, գրական էտիկա ասած բանը հասկացող, լրագրի դերը, նրա բռնած ուղղութիւնը ըմբռնող շրջանում, դա անուասը մի բախտաւորութիւն է:

Սակայն, հակառակ դրա, ապրել մի շրջանում, ուր անհատները զուրկ են սեփական համոզումից, ուր երկու պայքարող ուղղութիւնների, թերթերի յօդուածները կարդալով գրչակները ամեն ջանք գործ են դնում, որ իրանց թերթի թխուածները մեզ համար Մովսէսեան պատգամներ համարվեն,—ահա ձեզ ցաւալին, ահա ձեզ դժբախտութիւնը:

Նստել նրանց հետ և մի առ մի լրագրական վէճերի խնդիրները բացատրել շատ դժուար է. նախ, որ վէճ ասած բանը շատերը չը գիտեն, և երկրորդ՝ որ նրանք իրանց թերթի կարծիքը առանց քննելու հալած իւղի տեղ են ընդունում:

—Մեր թերթը սխալ կարծիք յայտնի՞, երբէք. չէ՞ որ մեր անսխալականներն են գրում.—ահա նրանց դէվիզը:

Վերջերումս լրագրական նիւթեր դարձան մի շարք խնդիրներ. Էջմիածնի պատգամաւորական ժողովը, Յոֆանեան դպրոցը և Մելիք-Թանգեան վարդապետը, (մեր նախկին փոխանորդը) Էջմիածնում մի խումբ բուլվարի-Թաթոսների ձեռքով կատարված հրէշաւոր ամբոխային դատը պիղորդ արքեպիսկոպոսի նկատմամբ և այլն. այս բոլորը, կարող եմ ասել, երկար վէճերի տեղիք տուին և ի զուր տեղը արիւն պղտորեցին, փոփոցներ առաջ բերին մեզանում, որին կարող էր տեղիք տալ լրագրական խակական պայքարը:

Եւ ինչ չաեն այդ տեսակ վէճերից. ոչինչ. «մէջը փուչ, եօթը հատիկ»:

Ցաւալի վիճող կողմերը առանց հետեւողականութեան ի զուր տաքանում, փոխվում են, և մէկ էլ տեսար մի զօրբա հայհոյանք դուրս պրծաւ հակառակորդի պահեստից, ուղղված դէպի կարդացած լրագրին և յօդուածագրին: Դէհ արի, և այդ տեսակ շրջանում որոշ ուղղութիւն փնտրիր, կարծիքներ ժողովիր:

Ձեր ձեռքին թերթեր կան. հանդիպում էք մի ծանօթ մարդի:

—Ի՞նչ էք ստացել պոստից,—հարցնում է:

Առանց պատասխանելու ցոյց էք տալիս համարները և ապա աւելացնում—«Մշակ»:

—Ը՞հ, դատարկ բան է,—ասում է և անցնում: Ո՞վ էր նա. մի երկրական, որին Մ-շ-ա-կ տառերն անգամ կատաղեցնում են, բայց նա իրան վիճողներից անպակաս ու ազնիւն է համարում. ողորմելի՜ պամպալինե՜ր:

Կամ թէ անկուսակցական ո՞ն, որ երկար ժամանակ թղթակցել է «Մշակ»-ին և յանկարծ որոշ հանգամանքներից յետոյ մի երկու յօդուածներ է տալիս «Երկրին», փի՜, փի՜, ինչ սիրալիր ժպիտնե՜ր, բարևնե՜ր, օվացիանե՜ր ձեր առաջ, ինչ խրախուսանքներ յօդուածներ(ը) շարունակելու համար, չեմ կարող ասել: Բախտը ձեզ ժպտում է:

Անցնում էք խանութի առաջով. ներսում վիճողներ կան. լսվում են «Մշակ», «Երկիր» բառերը. քայլերդ դանդաղեցնում և լսում էք.

—Ի՞նչ, ինչ, քու սրեր վկայ. մի տես է, մի կարդա է. մի տես «Մշակի» քանի համարներ են յետ ուղարկում է,—տաքանում է մէկը:

—Էդ ո՞րտեղ է գրած, պարո՛ն, որ «Մշակի» համարները յետ են ուղարկում,—հարցնում է միւսը:

—Որտե՞ղ, ա՛յ կարդա,—ցոյց է տալիս «Երկիրը»:

—Սուտ է, և այն էլ չարաչար, պոչաւոր սուտ,—ասում է նա:

—Մ՞ի թէ լրագիրը սուտ կասի,—պատասխանում է երկրականը:

—Շատ լաւ. այն ժամանակ խորհուրդ կը տամ, որ կարդաս և «Մշակի» պատասխանը.—ասում է վիճողը:

—«Մշակը» սուտ է խօսում,—դատում է դիմացինը:

—Ինչու, «Մշակը» լրագիր չէ՞, ինչ է. թէ՞ ձեր մեծերը չեն գրում, դրա համար սուտ է. ախր, դու տասցիր, որ լրագիրը սուտ չի ասի. կամ թէ, էդ ինչպէս է, որ 34 տարի գոյութիւն ունեցող «Մշակը» իր ամբողջ անցեալում սուրբ էր, իսկ ձեր պէրքը իրանց «Երկրում» ստախօս, մատնիչ, պրովօկատոր անուանեցին. լսիր, երբ ճշմարտութիւնն է գրում, մատնիչ էք ասում, որովհետև ձեր կեղտերն երևում են. իսկ երբ լսում է, օհօ, յաղթութիւնը մերն է, «չը պատասխանեց», էք կանչում: Ման օլիւմ, ինձ լսիր, ես ամենևին չեմ հաւատայ, որ «Մշակի» համարը յետ ուղարկվի. բայց եթէ պատահել է մի դէպք, կարող են էլի ձեր «տղերքը» սարքել և ասել. «յետ ուղարկեցէք, եթէ ոչ...»

—Ջէ, էլ տակով-գլխով մի անիր, որ «Մշակի» բանները բուրդ ա,—ընդհատում է միւսը,—տեսնաս հիմա քանի բաժանորդ կունենայ «Մշակը»:

—Եթէ բոլոր հայաշատ քաղաքներում ձեր խանութի նման 3—4 օրինակ ձրիաբէս առաքվող «Երկրի» համարների գումարը հանենք «Մշակի» բաժանորդների գումարից, կարելի է քո կարծիքով երկուսն էլ հաւասար բաժանորդներ ունենան... հո՛ հո՛-հո՛... (ըշտողները ես ծիծաղում են):

Ինչ լռութիւն է տիրում և ապա վերջին խօսքը շարունակում է.

—Ա՜խր МИЛЫЙ МОЙ, իմ և քո ունեցած կրթութիւնը ինչպէս կարող է երկու լրագիրների բռնած դիրքը քննադատել և վէճի առարկայ դարձնել, այն էլ այն դէպքում, երբ դու «Մշակ», իսկ ես էլ «Երկիր» չենք կարդում: Ինչու գրական անպարկեշտի յայտնի տաւշերին անգամ իրանց երկար յօդուածներով հակէւ են պարզաբանում որևէ վէճելի խնդիր, իսկ մենք, որ ուսման չէմքից ենք յետ դարձել, ուզում ենք մէկ լրագիր մրոտել, միւսը երկինք բարձրացնել. ախպէր, բաւական է, քո խեղ ու մտքը քեզ լինի, ես թաման չունեմ. միայն թէ թանիս թթու մի ասիլ՝ ման օլիւմ. եթէ ասում էլ ես, խորհուրդ կը տամ առաջ հաճի առնես, կարդաս, յետոյ անուանարկես:

Վէճը ընդհատվեց. ես անցայ: Նմանօրինակ վէճեր անշուշտ պատահում են և ուրիշ քաղաքներում և գիւղերում, և, ի հարկէ, բացի անախորժութիւնից ուրիշ ոչինչ չեն տալիս այդ տեսակ վէճերը: Իմ համեստ կարծիքով, այդ բոլորը վերջ կունենան և այն էլ շուտով, եթէ լրագիրները դադարեն իրար օձիք պատառոտելուց (վերջերս մեզ են երևում) և ժողովրդին չը տան լրագիրներ, որոնց համարները լիքն են հայհոյանքներով և սօսկ անձնական մերկացումներով:

Մեր գաւառի Ջանել-Ջնուլներին իմ վերջին խորհուրդս եմ տալիս, որ նրանք աւելի բարւոք համարեն և լռեն ու թեր ու դէմ կարծիքներով իրար գլուխ չը ցաւեցնեն, այն էլ ո՛չ սեփական և ո՛չ մի կրիտիկայի չը դիմացող կարծիքներով: Ցանկալի էր անհատի յատուկ լրջութիւն և սեփական համոզումով միայն խօսք բանային ու այնպէս վիճէին և մինչև իսկ այնքան անաչառ մտաբաց լինէին, որ նրանք, իրանց ձեռքի թերթի պակասութիւնն էլ տեսնելու ընդունակութիւն ունենային:

Արխատակէս արքեպիսկոպոսի մահվան լուրը, դերասան Գ. Պետրոսեանի ափսոսալի մահվամբ մեր ստացած տխուր տպաւորութեան վրա աւելացնելով, ծանր և խորին ցաւ պատճառեց նրա գեղեցիկ անցեալը և բեղմնաւոր գործունէութիւնը ճանաչող գնահատողներին:

Հանգիստ ձեր ոսկորներին, երկու տարբեր ասպարէզի անխոնջ գործիչներ: Ցաւագնաբար և իմ պաշտելի ուսուցիչ դերասան Պետրոսեանի մահով, նրա տեղը արտիստական բեմում կը մնայ թափուր և երկրորդ՝ հնկելի արքեպիսկոպոս Սեդրակեանի մահով սգաւոր և անմխիթար կը մնայ Աստրախանի թեմը:

Ես ծունկ եմ խոնարհում ձեր փառաւոր անցեալի և անմոռաց շիրիմների առաջ, անդուլական գործիչներ:

Սաղանդարեան

## Ի՞ՆՉ ԱՐԺԷՔ ՈՒՆԻ

Կարդացի «Երկրի» № 38-ի պոստ-արկղը և ակամայից բերնիցս դուրս թռան «աֆերիստներ», «ֆօկուսնիկներ» բառերը: Յիրաւի, մարդիկ ո՞րքան պիտի իրանց ամօթանքը կորցրած լինեն, որ համարձակվեն այդ տեսակ յիմարութիւն անել: Ընթերցող, պարզենք մեր միտքը: Ախալքալաքի գաւառի «ողջ» ազգաբնակութեան ներկայացուցիչները, թւով 70 հոգի, յայտնում են իրանց զզուանքը «Մշակի» և «Մուրճի» դէմ, իբրև գրական խօսքը արտաւորողների և ժողովրդական անունը շահագործողների:

Շատ լաւ, տեսնենք բանն ինչումն է:

Նախ մի քանի անմեղ հարցեր:

1) Այս ամառ ես շատ լաւ հասկացայ թէ ժողովրդի ներկայացուցիչներ անելով Դաշնակցութիւնն ինչ է հասկանում: Կանչում է իր մի քանի արտօնեալ շրջանային տեսուչներին կամ լիազօրներին, ստորագրել է տալիս առաջուց պատրաստած, մի քանի գիշերվայ քրթնաթոր աշխատանքի պտուղ՝ մրոտած թուղթը և այն հրատարակում ի լուր ամենեցուն ողջ ազգաբնակութեան կողմից:

Մեր գաւառի 70 կարծեցեալ ներկայացուցիչներ, ձեզնից արանքից դէ՞ք և ասացէք թէ՛ ձեր գիւղերի կամ քաղաքի ժողովուրդը ե՞րբ է արտօնել ձեզ յայտնելու ձեր անտեղի զզուանքը կամ գարշանքը «Մշակ»-ին կամ «Մուրճ»-ին. եթէ չեն արտօնել, ամօթ չէ՞ ձեզ, ժողովրդի անունից դուրս գալ գրական ասպարէզ և օյինբազութիւն անել:

2) Հետաքրքրական է իմանալ՝ մեր գաւառը և քաղաքը քանի՞ օրինակ «Մուրճ» է ստանում: Որքան ինձ յայտնի է, 5—8 օրինակից դէն չէ անցնելու, այն էլ կէսը քաղաքն է ստանում:

3) Ասացէք խնդրեմ, ե՞րբ մեր «գիտակից» գիւղացին ժամանակ ունեցաւ ամառնային և աշնանային ծանր աշխատանքների ժամանակ ընթերցանութեամբ հետաքրքրվելու հասարակական հարցերով և այն էլ «Մուրճ» ամսագրի միջոցով, որ ամբողջ գաւառում երկու-երեք օրինակ հազիւ լինի:

Ճշմարիտը միայն այս է, որ մեր ժողովուրդը եթէ մի լրագիր կարդում է, դա «Յառաջ»-ից սկսած մինչև «Երկիր» լրագիրներն են: Նամանաւանդ վերջին ժամանակներս, որ բազմաթիւ օրինակներ ձրի տարածում են ժողովրդեան մէջ: (40 օրինակ միայն քաղաքումս են տարածում, էլ սրճարան, էլ ակումբ, էլ նոյնիսկ փողոց «Երկիր»-ով լցվել է) Իսկ դրանք խօմ հակադաշնակցական պրօպագանդ չեն մղելու:

Հետաքրքիրն ձեզ եմ ուզում, գաւառիս ոչ իսկական պատգամաւորներ, էլ ո՞րտեղից ժողովուրդը կարող էր ծանօթ լինել «Մուրճ»-ի բովանդակութեան հետ: Դեռ նոյնիսկ ձեզանից շատերը չը գիտեն, թէ հայերէն «Մուրճ» ամսագիրը կա՞յ թէ չէ:

Ձեր այդ վարմունքը ինձ մի տխուր եզրակացութեան բերեց՝ որ եթէ ամէն կողմից Ախալքալաքի գաւառի նման «բողոք»-ներ են տեղում «Երկիր»-ի խմբագրատուն, այն դէպքում բոլոր այդ բողոքները շինծու և թելադրված բողոքներ են, որով և կորչում է բողոքի նշանակութիւնը:

Իմ տածած կարող է վկայել ամէն մի բարեխիղճ ախալքալաքցի և գիւղացի: Իսկ թէ որքան գոհ են Դաշնակցութիւնից, դրա համար չը հաւատացող չէզոք անձնաւորութիւններին հրաւիրում եմ Ախալքալաքի գաւառը ծպտեալ(?) շրջագայելու համար: Այն ժամանակ կը տեսնէք, թէ մեր գաւառում ինչ անծայր յուսահատութիւն է տիրում, և ազգաբնակութիւնն անբարոյականութեան որ աստիճանին է հասել:

Եզկելի արարածներ, այդպիսի բողոքներով, դուք ժողովրդին այլասերում, անբարոյականացնում էք:

Նոնիւս

Յ. Գ.—Միակ ելքը այս աֆերիստների սխրագործութիւններից ազատվելու համար ազատ մամուլն և ակտիվ կազմակերպված գործունէութիւնը պիտի լինի: Ազատախօս, շիտակ մամուլը կատարում է իր պարտքը: Իսկ ինչ է անում մեր կենտրօնական բողոքող երիտասարդութիւնը: Ինչու չի կազմակերպվում, ինչու իր թեւերի հովանաւորութեան տակ չի առնում գաւառները: Գաւառները մեն մենակ առանց դրսի օգնութեան դժուար թէ կարողանան բան անել և ազատել ժողովուրդը զանազան շահատակումներից ու բազմախնդիրների ձեռքից:

Նոյն

## ԲՈՂՈՔՆԵՐ

Նուխի, 16-ին նոյեմբերի

Խնդրում ենք այս նամակին մէկ անկիւն շնորհէք:

Մենք բոլորեքեանքս էլ յայտնում ենք մեր զայրոյթը այն վայրենի և քստմնելի արարքի դէմ, որ գործ է դրուել յայտնի խուժանապետների ղեկավարութեամբ, ծերունի մարդ արքեպիսկոպոս Պարիկեանի վրա պահանջում ենք անյապաղ արդար հատուցական դատաստան. բաւական է, որքան համբերեցինք:

Ալեքսանդր Մնացականեանց, Գարեգին Մարգարեանց, Կոստ. Ղուկասեանց, Ն. Ներսէսեանց, Միխայել Նաւասարդեանց, Ա. Աղաթեկեանց, Բագրատ տէր-Աւետիսեանց, Ս. Անդրէասեանց, Ա. Նահապետեանց, Ս. Նաւասարդեանց:

(Հեռագիր)

Լայպցիգ, 19 նոյեմբերի

(Պատճէնը ուղարկված է «Երկիր»-ին)

Պահանջում ենք անաչառ քննութիւն Էջմիածնի դէպքերի:

Ի դիմաց միութեան ուսանողների՝

Տէր Սարգսեան:

## ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Եկատերինօդար, նոյեմբերի 14 ին

«Եկատերինօդարի առաջնորդական ընտրութեան շրջանային ժողովի պատուիրակները, ի միջի այլոց, խօսակցութեան նիւթ դարձնելով Էջմիածնում տեղի ունեցած վերջին ժամանակներս անախորժ դէպքերը, պահանջում են քննութիւն՝ երևան հանելու այդ գործի սկզբնապատճառները և ենթարկել նրանց հասարակական դատաստանի»:

Սոյն բանաձևը յանձնվում է պատուիրակային ժողովի նախագահ պ. Նիկողայոս Սաթունեանին իսկականը ուղարկել Նորին Վեհափառութեան, իսկ պատճէնը թեմիս նորընտիր առաջնորդացու Մեսրովբ վ. Տէր-Մովսիսեանին, նաև «Երկիր» և «Մշակի» խմբագրութիւններին տպելու համար:

Ստորագրել են զանազան տեղերի պատուիրակներ թւով 12 հոգի:

Նախագահ պատուիրակային ժողովի՝

Ն. Սաթունեան

Վաղարշապատ, նոյեմբերի 16 ին

Թոյլ տուէք ձեր թերթի միջոցով մի թիւրիմացութիւն պարզել:

«Մշակ» № 250-ում Վաղարշապատից «Գրիգոր Մելիքսեդեկեանց» ստորագրութեամբ մի լուր է տպված, որ ամբողջովին սխալ և շինովի տեղեկութիւն է: Նախ՝ Կարապետ Թոթոլեանցը ոչ թէ «ինտելիգենտ», այլ ամենից տգէտ ու անբարոյական է, որ ամբողջ օրերով գինետներումն է քարշ գալիս. երկրորդ՝ ոչ թէ «ամենից յարգված երիտասարդն է». այլ ամենից ճանաչված հարբեցող և անգործ մի անձնաւորութիւն է, և նա չէ սպանված: Դիոնիսիոս Մուշեղեանցին երբէք չեն կողոպտել: Սահակ Զաքարեանցի խանութից երբէք չեն տարել և ոչ մի կոպէկի ապրանք:

Այդպիսի ստորագրութեամբ անձնաւորութիւն չը կայ այստեղ: Ըստ երևոյթին այդ ստորագրութիւնը կեղծ է, իսկ տեղեկութիւնը ամբողջովին յերիւրածոյ:

Յ. Ալէքեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կոմս Վորոնցով-Դաշկովը հեռագրով խնդրել է պրեմիէրին այս ընտրութիւններին ևս վերապահել իրան իրաւունք որոշելու հայերից ու թուրքերից ընտրվելիք պատուիրակների թիւը, ինչպէս որ դա եղաւ առաջին ընտրութիւնների ժամանակ:

—

Մկրտիչ և Թովմաս Խանդուլեանցները ներկայացնելով մեզ մի հարիւր (100) րուբլի, խնդրում են յանձնել Թիֆլիսի կենտրօնական նպաստամատոյց Յանձնաժողովին, հայ տառապեալների օգտին գործադրելու, ի յիշատակ իրանց հօր նորին հանգուցեալ Աւետիս Խանդուլեանցի: Այդ գումարը յանձնեցինք Յանձնաժողովի գանձապահ պ. Ալեք. Մելիք-Ազարեանցին:

—

Ռուշինսկի(?) փողոցում եղող Ղուկասեանի ձկնեղէնի խանութի վրա սպանութեան և կեղեքելու նպատակով զինված յարձակում գործելու համար Թիֆլիսի գեն.-նահանգապետի կարգադրութեամբ զինուորական-դաշտային դատարանի են ենթարկված հետեւեալ անձերը. 1) Մ. Ձիկվաձէն, 2) Նեստոր Շարաբիձէն, 3) Ալ. Կիկոլաշվիլին, 4) Ալ. Գոմարթելին, 5) Գր. Ջափարիձէն, 6) Թիլաւեցի Արսէմ Սուլխանովը. 7) Սամսոն Տօմաձէն, 8) Վասիլիյ Լէկիշվիլին: Նոյն կողոպտող տերրօրիստների խմբին պատկանելու և կրակելով ոստիկանների վրա փախչելու փորձ անելու պատճառով 9) Ալ. Միրօբաշվիլին, 10) Դ. Ախվլիթնին և 11) Արչ. Բոխուաովը:

—

Նոյեմբերի 21-ին ձկնավաճառ Ղուկասովի խանութի վրա նետած ռումբից վիրավորվել է միայն ծառայողներից Սողոմոն Ջավախովը թեթև կերպով: Իսկապէս վնասվել է խանութի ձկնեղէնը:

—

Նոյեմբերի 21-ին, երեկոյեան ժամը 8-ին Գոլովինսկայա պրօսպեկտի վրա, Արտասահմանական ընկերութեան դիմաց ելեկտրական վագոնի տակ դրված է եղել պետարդա, որը պայթել է սոսկալի շառաչիւնով: Զրօսնող հասարակութիւնը և վագոնի մէջ եղածները միայն վախի են հարվել:

—

Գրիբօէդովսկի և Կրուզէնշտեռնսկի փողոցների անկիւնում գտնվող «РИМЪ» ռեստորանը փակված է 1 ամսով, իսկ տէրը 200 րուբլի տուգանքի է ենթարկված՝ գիմնազիստներին ռեստորան թողնելու համար:

—

Մետէխի բանտից ազատ են թողել մասնաւոր «Ծալքա»-ի խմբագրութեան մէջ ձերբակալված պ. պ. Մչեդլիձէին, Լէօնիձէին, Արուլաձէին և 11 ուրիշ անձանց:

—

Թիֆլիսում պոլիտեխնիկում հիմնելու հարցով զբաղվող մասնաժողովը նոյեմբերի 21 ին դիտել է Հալաբարում, Դիդուբէում և Նաւթլուղում գտնվող քաղաքի հողաբաժինները պոլիտեխնիկումի համար յարմար տեղ ընտրելու համար:

—

Նոյեմբերի 21-ին կայացել է Թիֆլիսի նահանգի նահանգական և գաւառական ազնուականների պարագլուխների, ազնուականների պատգամաւորական ժողովի անդամների և հրաւիրած անձերի արտակարգ նիստը՝ Կովկասում երդուեալների դատարան հաստատելու հարցը քննելու համար: Ժողովը սկզբունքով խօսել է յօգուտ այդ հարցի լուծման դրական մտքով: Վերջում ընտրել է մի մասնաժողով, որին յանձնարարել է մանրամասն զեկուցագիր ներկայացնել այդ հարցի մասին: Մասնաժողովի կազմի մէջ մտել են երդ. հաւ. Գվազավան, Կանչէլին և իշխան Մաչաբէլին:

—

Թիֆլիսի քաղաքային վարչութեան կից հաստատած ստատիստիքական բիւրօին ներկայացրված են 8, 9, և 10-րդ քաղաքամասերի ընտրողների վաւերացրած յայտարարութիւնները, մօտաւորապէս 3000 հատ: Թիֆլիսի հայրենասիրական ընկերութիւնը ընտրողական ցուցակները կազմող բիւրօին ներկայացրել է իր անդամներից 225 հոգու վաւերացրած ցուցակները:

—

Տեղական թուրքերի միակ ներկայացուցիչ ինժ. Բահիմ-բէկ-Ախունդովը խնդրել է քաղաքային Դումային, վերցնել իրանից ձայնաւորի կոչումը:

—

Նոյեմբերի 21-ին, երեկոյեան մօտ ժամը 7-ին, Օլգինսկի փողոցում կանգնող ոստիկանը մտնելով ոստիկանատուն յայտնել է, որ Օլգինսկի փողոցի ծայրում, ցանկապատի յետևը ժողովել են 18—20 հոգի կասկածելի անձնաւորութիւններ: Ստանալով այդ տեղեկութիւնը, ոստիկանատանը գտնվող թաղային վերահսկիչը, վերցնելով իր հետ 2 ոստիկան, դիմել է չարագործների ամբոխի կողմը: Երբ վերջինս նկատում է ոստիկանութեան մօտենալը, սկսում է փախչել Քուռ գետի ուղղութեամբ ընկած ձորի կողմը: Եւ երբ ոստիկանութիւնը եռևից նախազգուշացրել է «կանգնիր»—խումբը սկսել է կրակել նրա վրայ: Այդ ժամանակ ոստիկանատանը երկաթեայ ցանցով պատած անհեռակում բանտարկված է եղել վաճառական Բագինսովի սպանութեան գործի մէջ կասկածվող Թիֆլիսեցի Սանդրօ Խուցիշվիլին, որը հերթապահ ոստիկանին խնդրում է թողնել բնական պահանջը կատարելու, որը և ոստիկանը կատարում է: Եւ երբ բանտարկեալը հասնում է արտաքնոցի մօտ, յանկարծ թռչում է ցանկապատից և խառնվում է ցանկապատի այն կողմը սպասող ընկերների մէջ և բոլորը սկսում են փախուստի դիմել: Փախչելու ժամանակ նրանցից մէկը յետ դառնալով ատրճանակ է պարպում հետապնդող ոստիկանութեան վրա, սակայն սպանվում է երկու գնդակով: Սպանվածի մօտ գտնված է «Սմիտ և Վիսսոն» սիստեմի ատրճանակ: Նրա անձնաւորութիւնը դեռ պարզված չէ: Հիմք կայ կարծելու, որ վերոյիշեալ չարագործները բանտարկված Խուցիշվիլուն ազատելու նպատակով, մտադիր են եղել յարձակվել ոստիկանատան վրա և նպաստել Խուցիշվիլու ոստիկանատանից փախչելուն:

—

Գեն.-մայոր Գոլոշչապովը, որը մի անյայտ չարագործի ձեռքով շուկայում վիրաւորվել էր, այնպէս առողջացել է, որ դուրս է եկել Միքայէլեան հիւանդանոցից: Վէրքը առողջանում է, բարդութիւններ չեն նկատվում:

—

Նոյեմբերի 21-ին տեղի է ունեցել Թիֆլիսի հայ ուսուցիչների նիստը, որ շարունակութիւն էր կազմում նախորդի: Պէտք է ընտրէին բիւրօյի մի անդամ, երեք փոխանորդ և վերստուգիչ յանձնաժողովի երեք անդամ: Ընտրվել է անդամ Ա. Մեհրաբեան, փոխանորդներ՝ օր. օր. Տէր-Ղեւոնդեան, Մալումեան և պ. Խաչատուր Դիլանեան, վերստուգող յանձնաժողովի անդամներ՝ Տէր Միրաքեան, Աւետեան և օր. Տիգրանեան:

—

Անդրկովկասեան երկաթուղու ադմինիստրացիան խնդրում է, առանց թոյլտուութիւն ստանալու Բագուի քաղաքային վարչութիւնից, անց է կացնում երկրորդ նաւթանցքի խողովակը 5 վերստ տարածութեամբ Վոլչի դարպասից մինչև Կանի-Թափա: Քաղաքագլխի խնդրեքով ոստիկանապետը պահանջներ է նշանակել, որպէսզի թոյլ չը տան շարունակելու աշխատանքները: Այդ առթիվ, համաձայն գումարի որոշման, քաղաքային վարչութիւնը հեռագրել է ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեանը և բացատրել ամբողջ 26 տարի շարունակ կատարվող քաղաքային հողերի յափշտակութեան պատմութիւնը: Ի միջի այլոց հեռագրով խնդրում են մինիստրութեանը կարգադրել, որպէսզի դադարեցվեն ապօրէն գործողութիւնները անդրկովկասեան երկաթուղու կողմից: Այդ հեռագրին կցել են և գումարի որոշումը, որից երևում է, որ քաղաքը այլևս ոչ մի համաձայնութիւն չէ կայացնելու երկաթուղու վարչութեան հետ և պահանջում է վճարել 220,000 րուբլի պարտքը լրիւ: Քաղաքային վարչութիւնը, ինչպէս լսում ենք, միաժամանակ հեռագրով դիմել է և կովկասեան Փոխարքային խնդրելով աջակցութիւն և անօրինութիւն(?):

—

Ինչպէս լսում ենք, նոյեմբերի 21-ին վրաց ազնուականութեան ներկայացուցիչները ժողով են գումարել խորհրդակցելու ազնուականութեան գիմնազիայի ծրագրի փոփոխութեան մասին: Այդ նիստին հրաւիրված են եղել գործին լաւատեղեակ ու աջակցող անձինք, որոնց թւում և քաղաքիս յայտնի մանկավարժներն ու ուսուցիչները: Ժողովը ընտրել է ձեռնհաս անձերից յատուկ մասնաժողով, որոնք բերել տալով արտասահմանեան քաղաքակիրթ պետութիւնների օրինակելի միջնակարգ դպրոցների ծրագիրը պէտք է կազմեն ազնուականութեան գիմնազիայի նոր ծրագիրը համապատասխան կեանքի և գիտութեան նոր պահանջներին, այն պայմանով միայն, որպէսզի յիշեալ գիմնազիաւարտները առանց պատրաստվելու ուղղակի կարողանան մտնել ոչ միայն պետական համալսարանները, այլև արտասահմանեան: Ի միջի այլոց, նպատակ ունեն այդ նոր գիմնազիայում եւրօպական լեզուներից մէկը պարտադիր դարձնել:

—

Էջմիածնի Սինօդը կարգադրել է հաղորդել Թիֆլիսի նահանգական դատարանի պրօկուրօրին, որ նախկին վարդապետ Ղլտճեանի մասին քննութիւն է սկսված 1400 րուբլի իւրացնելու և դօկումենտները ոչնչացնելու համար:

—

Շաբաթ, նոյեմբերի 18-ին, Կովկասի տեխնիքական ընկերութեան դահլիճում Թիֆլիսում հիմնվող պոլիտեխնիկումի գլխաւոր կոմիտեի անդամ իշխ. Գ. Մ. Թումանովը զեկուցեց բարձրագոյն դպրոց բանալու մասին: Ժողովը ցանկութիւն յայտնեց բանալ Թիֆլիսում և համալսարան, և պոլիտեխնիկում:

—

Կիրակի, նոյեմբերի 19-ին, Վորոնցովսկայա փողոցում կայացաւ մանկավարժական օրիորդաց մասնաւոր դպրոցի բացումը (տարրական դպրոցների ծրագրով), որի հիմնադիրն է Ն. Դ. Ասլխասովը: Դպրոցի բացմանը ներկայ էին եղել Կովկասի շէյխ-ուլ-իսլամը, գաղին, ժողովրդական դպրոցների վերատեսուչը և շատ յայտնի անձինք: Շէյխ-ուլ-իսլամը և գաղին համակրական ճառեր են արտասանել:

—

ԻՆԱՀԱՏ գիւղի (Լօռու վիճակ) չորս հոգի ամսիս 10-ին գալիս են գիւղը Ուզունլար (Օձուն) և գիւղի կենտրոնում մեր քնած տանուտիրոջ ներկայութեամբ վէճի բռնվելով մեր գիւղացի Հախուեանց Սերգօյի հետ, «քաջաբար» սպանում են վերջինիս, որովհետև նա համարձակվել էր նրանց հետ վիճելու և նրանց իրանց իսկական անունով, գողեր, աւազակներ կոչելու—և հանգիստ հեռանում: Մինչև օրս էլ մարդասպաններն ազատ շրջում են զինված, իսկ մեր տանուտէրը դարձել քնած է. քնած է և գիւղի երիտասարդութիւնը, որ թոյլ տուեց հարևան գիւղի սրիկաներին ոճիրը կատարելուց յետոյ ազատ հեռանալու: Մեր հարևան Ինահատ գիւղում տաւարի մէջ ժանտախտ է երևացել և բաւականին կոտորած է անում. գիւղացիք դիմել են բժշկի, բայց ոչ մի տեղից օգնութիւն չը կայ:

—

Նոյեմբերի 21-ից Ուլուխանլու-Ջուլֆայի երկաթուղային գծի վրա ժամանակաւորապէս բացվել է մարդատար գնացքների երթեւեկութիւնը Հին-Նախիջևանի և Պարսկաստանի սահմանի միջև:

—

Նոյեմբերի 20-ից Բագւում, Միխայլօվսկի փողոցում, Իսկենդար-բէգի, Աղա Բահիր բէգի, Քեարիմ բէգ Մելիքօֆների մագաղինում աշխատող թուրք գործակատարները գործադուլ են յայտարարել իրանց խօզեյնների դէմ: Թուրք գործակատարների պահանջները տնտեսական են: Տարօրինակն այն է, որ թուրք առեւտրականները բերանացի ընդունում են իրանց գործակատարների պահանջները, բայց գործնականապէս չեն հաստատում իրանց համաձայնութիւնը: Դրա համար էլ գործակատարները իրանց տէրերի խոստումներից չեն շլանում. պահանջում են գործ՝ աշխատանքի գլուխ կանգնելու համար:

—

Կոզակները շահատակում են Բագւում: Բալաղաքայլի պաշտօնակատար Բեամիլ-բէգ Սաֆար-Ալիեվը Բագուի ժամանակաւոր նահանգապետին ներկայացրել է հետևեալ բողոքը. «Երէկ, 587 համար կրող կառքի տէր Կասիմ Ջիլի-Ֆեթար օղլին ինձ մօտ եկաւ և յայտնեց, որ ամսի 19-ին, գիշերվայ 12-ից 2 ժամ անցած, հրապարակից կառքով տուն վերադառնալիս՝ Վերխնի Տազապիրսկայա փողոցում, ուր կանգնած են լինում կոզակների մի խումբ, մի կոզակ դիմելով կառապանին փող է պահանջել նրանից: Կառապանը երբ պատասխանել է, որ փող չունի, կոզակը իսկոյն քաշել է իր դաշոյնը և ծանր կերպով վիրաւորել նրան գլխից: Կառապանը երկիւղից թողնում է կառքը և ցանկանում փախչել, բայց երկու ուրիշ կոզակներ նրան բռնելու համար հետապնդում են: Կառապանը, ճարահատ, իր փրկութիւնը որոնում է նոյն փողոցում գտնվող Սադըխ Ազիմ բէգի տանը ապաստանելով: Վիրաւոր կառապանի աղաղակների վրա հաւաքվում են շրջակայքի մահմեդականները և ազատում դժբաղդին կոզակների ձեռքից: Այսպիսի դէպքերը ոչ թէ եզակի են, բացառիկ են, այլ համարեա ամեն օր կրկնվում են, և ամեն օր հասարակութիւնը բողոք է բարձրացնում: Բայց և այնպէս ոչ մի միջոց ձեռք չէ առնվում: Քանի՜-քանի՜ անգամ նոյն թաղում բնակվող մահմեդականները կողոպտվել են նոյն տեղում կանգնած կոզակների կողմից: Եւ սակայն չը կայ դարման: Ահա ինչու համար խնդրում եմ ձերդ գերազանցութիւնից, որ հարկաւոր եղած միջոցները ձեռք առնէք դրա դէմ»:

—

Բագուի քաղաքային վարչութիւնը նոյեմբերի 18-ին հեռագիր է ուղարկել ճանապարհների հաղորդակցութեան մինիստրին, որով պաշտպանում են Բագուի ալյուրացների յուզած խնդիրը, որպէսզի Վլադիկաւկազեան երկաթուղու վագոններից յատկացվեն ցորենի

մատակարարութեան համար, ժամանակելով, որ մնացած հացի պաշարը կարող է բաւարարութիւն տալ մի քանի օր միայն։ Բացի դրանից ալիւրի պակասութիւնը կարող է ծանր հետեւանքներ ունենալ ոչ միայն Բագւում, այլ և Անդրկովկասում ու Անդրկասպեան երկրում, որտեղ ալիւրի պաշարը ստացւում է գլխաւորապէս Բագւից։

—

Սիմֆերոպոլից «Бирж. Вѣд.» լրագրին հեռագրում են, որ Եւպատորիայից տեղեկութիւն է ստացւել այն ընդհանուր յուզմունքի մասին, որ տիրում է ժողովրդի մէջ։ Պատճառը ռուս ժողովրդի դաշնակցութեան անդամ Արսէնի վարդապետի այն հրէշաւոր քարոզներն են, որ նա շրջագայելով երկրում, կոչ է անում ռուս ժողովրդին ջարդի ենթարկել բոլոր օտարազգիներին։

—

«Р. В.» լրագրին հաղորդում են, որ Եկատերինոսլավի նահանգապետը թոյլտւութեան թուղթ է տուել հոկտեմբերի 17-ի դաշնակցութեան անդամ Օրենպարենկոյին քաղաքական ժողովներ գումարելու նահանգի բոլոր մասերում։

—

Նոյեմբերի 17-ին համալսարանում վերջացել են համալսարանի կենտրոնական Մարմնի ընտրութիւնները։ Ընտրողական բիւրօն հաշւել է ստացւած թերթիկները և պարզւել է ստացւած հետեւանքը, որից երեւում է, որ ընդհանուր ձայների թիւը եղել է 5,437, որից սոցիալ-դեմոկրատները ստացել են 2044 ձայն, սահմանադիր-ռամկավարները՝ 1,462, սոցիալիստ-յեղափոխականները՝ 1,258, անկախները՝ 263, աշխատաւորները՝ 314, սիոնիստները՝ 35, լեհ Պոլսայլկին՝ 121։ Մօտաւոր հաշւով Կենտրոնական Օրգանում կը լինի 12 սոցիալ-դեմոկրատ, սահմանադիր-ռամկավարներ՝ 8, սոցիալիստ-յեղափոխականներ՝ 7, աշխատաւոր՝ 2, անկախ՝ 1 և ուսանող Պոլսայլկին։

—

«Текущіе Дни» լրագիրը տեղեկութիւն է ստացել, որ մօտ օրերս Ֆինլանդիա է ուղարկւելու ուլան-կօզակների գունդը, որը պէտք է բնակեցնւի երեք բերդերում—Աբոում, Վիբորգում և Սվէաբորգում։

—

Ռուսիկանական դեպարտամենտը Կիէվից հաղորդագրութիւններ է ստանում, որտեղ ժամանակում են, որ մի քանի գաւառների գիւղացիների մէջ յուզմունք է տիրում Պետական Դումայի ընտրութիւնների մօտենալու պատճառով։ («Вѣкъ»)

—

Նովորոսսիյսկից «Вирж. Вѣд.» լրագրին հեռագրում են, որ վճռւած է դեկտեմբերի սկզբներում սկսել Սօչիի ապստամբութեան գործը։ Մեղադրւում են 372 հոգի, վկաներ կանչւած են 1,300 հոգի։ Այդ գործի քննութիւնը կատարւել է ամբողջ 10 ամիս շարունակ։

—

«Бирж. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ կայսերական պալատի մինիստր բարօն Ֆրեդերիկսը թողնում է իր պաշտօնը։ Նրան յաջորդ են համարում իշխ. Օբոլենսկին, որ այժմ վարում է Նորին Մեծութեան կաբինետի կառավարչի պաշտօնը։

—

Նորերս լոյս տեսած «Новая Газета» լրագիրը արժանահաւատ աղբիւրներից տեղեկացել է, որ Ներքին գործերի մինիստրի օգնական Գուրկօն մօտիկ ժամանակներս թողնելու է իր պաշտօնը։ Այդ հրաժարականը կապ ունի հացի մատակարարութեան կապալը Լիդվալ ֆիրմային տալու գործի հետ։

—

Պետական Դումայի նախկին անդամ աշխատաւոր խմբակի լիդեր Ալադինը, «Пет. Газ.»-ի ասելով, ներկայումս ծանր կերպով հիւանդ է։ Ծայրայեղ ձախակողմեան կուսակցութիւնների մէջ լուր է պտտում, որ, իբրև թէ, Լոնդոնից ստացած տեղեկութեան համաձայն, Ալադինը ջղերի հիւանդութիւն ունի և նրան փոխադրել են հոգեկան հիւանդների բուժարանը։ Բժիշկները յուսով են, որ նա շուտով կը կազդուրւի, որովհետև հիւանդութիւնը ոչ այլ ինչ է, բայց եթէ սաստիկ յոգնածութիւն։

—

Բոլոր նահանգներում «Нов. Газета» լրագրի ասելով, սահմանւում է նահանգապետի ռուսիկանական մասի օգնականի պաշտօն։ Առաջարկւած է այդ պաշտօնների համար նշանակել ժանդարմերիական օֆիցերներ։

—

«Пет. Газета» լրագիրը հաղորդում է, որ կոմս Վիտտէն վճռել է Պետերբուրգում, առեւտրի և արդիւնաբերութեան նախկին մինիստր Ֆեօդորովի խմբագրութեամբ, մի լրագիր հրատարակել։ Մի ուրիշ լուր հաղորդում է, որ կոմս Վիտտէն, իբրև թէ գնել է «Страна» լրագիրը։

—

Անդրբայկալեան կօզակներին սրանից մի ամիս առաջ առաջարկւած է եղել գնալ Եւրոպական Ռուսաստան կալուածատիրական հողերը, ֆաբրիկները և գործարանները պահպանելու համար։ Այդ առիթով «Сегодня» լրագիրը հաղորդում է, որ կօզակները մինչև այժմ էլ պատասխան չեն տուել այդ առաջարկութեանը և լուռ նստել են իրանց տեղերում։ Մինչև անգամ այն, համեմատաբար մեծ ռոճիկը, 30 րուբլի ամսականը չէ գրաւում նրանց։

—

Նոյեմբերի լոյս 21-ի գիշերը Մարիուպոլում իշխանութիւնը գրաւել է սոց.-դեմոկրատների տպարանը մի քանի պուդ տառերով, ահագին քանակութեամբ նոր տպագրւած թռուցիկներ և շարւածքով։ Կան բանտարկւածներ։ («Ռ. Հ. Գ.»)

—

Նոյեմբերի 12-ին Վարշաւայի ճանապարհի արհեստանոցներում ժանդարմական ռաւիկանութիւնը գտել է զանազան անկիւններում թափւած՝ սոց.-յեղափոխականների մաքսիմալիստների կուսակցութեան թռուցիկները և կոչերը («Нов. Вр.»)։

—

Կազանից «Бирж. Вѣд.»-ին հեռագրում են. «Կազանի նահանգում տիրող դժնդակ սովը ստիպեց թուրքերին խմբերով իրանց հարազատ զաւակներին վաճառել։ Ամեն կողմից նահանգն են շտապել «կենդանի ապրանք» գնողները։ Գլխաւորապէս տանում են Կովկաս։ Տէշխակի գաւառի թուրքական փոքրիկ գիւղերից գնել են 12—17-ամեայ 8 հատ աղջիկներ։ Իւրաքանչիւր աղջկայ գինը 100 րուբլուց սկսած մինչև 150 ր.։ Շղթեցուցիչ և զարհուրելի պատկերներ էին ստացւում երեխաների՝ ծնողներից բաժանւելու և վերջին հրաժեշտը տալու ժամանակ»։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

20 նոյեմբերի

ԿԻԵՎ, 20 նոյեմբերի։ Մետրոպոլիտը դիմել է հոգևորականութեան մի նամակով, որով ցոյց է տալիս, որ կրամոլան ոչ թէ իր վախճանին է դիմում, այլ ընդհակառակն, օրէցօր աճում է։ Երկար խօսելով «անիծեալ կրամոլայի» մասին, մետրոպոլիտը վերջում առաջարկում է մաղթանքների ժամանակ տարել Սինոդի որոշած աղաչանքներն ու պաղատանքները կրամոլան արմատախիլ անելու համար, բացի դրանից մետրոպոլիտը յիշեցնում է, որ հոկտ. 17-ի մանիֆեստից յետոյ սարկաւագներից շատերը իրանց թոյլ են տալիս չը յիշատակել «Ամենաինքնակալ» խօսքը...

ՍՄՈԼԵՆՍԿ, 19 նոյեմբերի։ Պետական Դումայի անդամ Էնգելգարդի նախաձեռնութեամբ կայացաւ խաղաղ վերածնութեան կուսակցութեան տեղական բաժնի կազմակերպիչ ժողովը։ Ներկայ էին նահանգական վարչութեան ծառայողները, գաւառական պարագլուխները, վաճառականութեան ներկայացուցիչները, իրաւաբաններ, բժիշկներ, առաւելապէս շատ մանկավարժներ։ Բացւած է ստորագրութիւն։ Արդիւնաբերական կուսակցութիւնը արդէն ստորագրւել։ Սպասւում է, որ շատերը կը յարւեն խաղաղ վերածնութեան կուսակցութեան։

ՑԵՏԻՆԷ, 20 նոյեմբերի։ Սկուպչինայի մշակած նոր ուղերձը 12 պատգամաւորների ձեռքով մատուցւած է իշխան Նիկոլային։ Ուղերձի մէջ շնորհակալութիւն է յայտնւած իշխանին սկուպչինան գումարելու համար, մատնանշւած է, որ Չերնոգորիան բարեկամական յարաբերութեան մէջ է մեծ պետութիւնների—առաւելապէս Ռուսաստանի հետ։

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 20 նոյեմբերի։ Թագաւորի, թագաւորական ընտանիքի անդամների, մինիստրների, դիպլոմատիական կորպուսի և երկու պալատների անդամների ներկայութեամբ կայացաւ նախկին մինիստր նախագահ Անտրաշիի արձանի հանդիսաւոր բացումը։

ՎԻԼՆԱ, 20 նոյեմբերի։ Վիլնայի պահակախմբի անդամների ձեռքով Կօվնայում ձերբակալւած են անիշխանականների «Սև Աղաւ» ռազմիկ խմբի բոլոր անդամները։ Միաժամանակ ձերբակալւած են միացեալ ռազմիկ խմբի անդամները։

ՄԱԴՐԻԴ, 20 նոյեմբերի։ «Имперіалъ» լրագիրը հաղորդում է, որ երեկոյեան, կառավարութիւնը յուզիչ լուրեր է ստացել Մարոկկոյից։ Ֆրանսիական էսկադրան Տանժերի հրամանատարութեամբ խարիսխ է ձգել Կադիկսում և պաշար է վերցնում։

ՏՕԿԻՕ, 20 նոյեմբերի։ Մանջուրական երկաթուղու կառավարիչ բարօն Գոտօն, գերմանական հեռագրական ընկերութեան ներկայացուցչին, խօսակցութեան ժամանակ ասել է հետեւեալը, «ես, իմ կառավարութեան հետ միասին Մանջուրական երկաթուղին համարում ենք Մանջուրիայի տնտեսական և կուլտուրական բարգաւաճման օժանդակիչ մի միջոց։ Մենք աջակցելու ենք միջազգային առեւտրին և հոգալու ենք ոչ լոկ ճապոնական շահերի մասին։ Մենք կողմնակից ենք «բաց դռների» սկզբունքին և մանրամասն հետեւելու ենք, որ բոլոր ժողովուրդներին իրաւունքները հաւասար կերպով գնահատւեն»։

21 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 նոյեմբերի։ Մինիստրների խորհուրդը համաձայնել է 3,812,322 րուբլի փոխառութիւն բաց թողնել — $5^1/_2$ %-ով—այն զեմստվոներին, որոնք չը կարողանում հերթական հարցերը ծածկել։—Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը զեմստվոներից ստացել է մօտ 50 միջնորդագրեր, որոնցով խնդրւում է մացնել ընդհանուր պարտադիր ուսում 1907 թւից։—Ներքին գործերի մինիստրութիւնը բացատրել է, որ այն ծառայողը անձինք, որ քաղաքիս և գաւառի սահմաններում մի տարուց պակաս են ապրել, իրաւունք չեն ստանում մասնակցել Պետական Դումայի ընտրութիւններին։—Օրէնբուրգի նահանգապետ գեներալ բարօն ֆօն Տաուբէն նշանակւած է ժանդարմների առանձին կորպուսի հրամանատար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 նոյեմբերի։ Նոյեմբերի 18-ին, մինիստրների խորհուրդը կայացրած իր նիստում որոշել է առեւտրի մինիստրի անօրէնութեան յանձնել ծովային վարչութեան Բիբի-Էյբաթում ունեցած հողամասը և Զաբրաթձին ու Բալախանի գիւղին կից պետական հողաբաժինները՝ ձրիաբար յանձնելու նաւթարդիւնաբերողներին—բանւորական շէնքերի համար։

ԹԵՀՐԱՆ, 20 նոյեմբերի։ Ներքին փոխառութեան և պարսից ազգային բանկ հաստատելու հարցերը, ըստ երեւոյթին, կիրագործւեն։ Պարլամենտը սրված յարաբերութեան մէջ է պալատական կուսակցութեան հետ։ Միջնադէպի պատճառը—հաց գնելու հարցն է։ Գահաժառանգը, որին Շահը կանչել է Թաւրիզից, արդէն Թեհրան է եկել և Շահի խնդրանօք պետութեան խնամակալ է դարձել։

ԵԼԱԲՈՒԳԱ, 20 նոյեմբերի։ Կրօնուսոյցի բոյկօտ անելու համար տեղական ռէալական դպրոցի չորս բարձր դասարանները փակւած են մինչև յունվար։ Աշակերտները հրաւիրւած են արձակւած և կընդունւեն վերստին խնդրագրերով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 նոյեմբերի։ Թագաւոր կայսրը և Թագուհի կայսրուհին երկաթուղով Ցարսկօ Սէլօից ժամանեցին Գատչինա։ Ցերեկով արտասահմանից վերադարձաւ Թագուհի-Կայսրուհի Մարիա Ֆէոդորովնան։—Այսօր պալատը, դասային ներկայացուցիչների հետ միասին, քննեց «Бирж. Вѣд.»-ի հրատարակիչ Պրոպպերի, խմբագիր Բոնդիի և քարտուղար Կաուֆմանի գործը և դատապարտեց, Պրոպպերին—միամեայ, Բոնդին—երկշաբաթեայ բանտարկութեան, Կաուֆմանին արդարացրեց։ Սկզբում երեքն էլ արդար էին ճանաչւել—Սկսել են խաղաղ վերածնութեան կուսակցութեան Պետերբուրգի և Մոսկվայի կենտրոնական մնացեալ կոմիտէտների նիստերը, կոմս Հէյդէնի, Շիպովի, Լվովի և Ստախովիչի մասնակցութեամբ։ Որոշւած է թոյլ չը տալ, որ խաղաղ վերածնութեան և միացած կուսակցութիւնների, թէև որոշ և հոկտ. 17-ի դաշնակցութեան անդամները կապակցւեն միմեանց հետ։ Դաշնակցութիւնների և նախընտրական բլոկների հարցի նկատմամբ—վճռւած է որեւէ դաշնակցութիւն կամ միութիւն չը հաստատել։ Առանձին տեղերում, ուր անհրաժեշտ կը համարւի նախընտրական համաձայնութիւն կապելու հարցը, այն էլ միայն թեկնածուների անցկացնելու նպատակով, թողնւում է տեղական կոմիտէտների հայեցողութեան մի պայմանով միայն, որ թեկնածուների աշխարհայեցքները համապատասխանեն խաղաղ վերածնութեան կուսակցութեան ծրագրի հիմնական պահանջներին։

21 նոյեմբերի

ԲԻՇԻՆԵՎ, 20 նոյեմբերի։ Նահանգական դատարանը քննել է «Другъ» լրագրի խմբագիր Կրուշէվանի և «Бессарабск. Жизнь»-ի խմբագիր Զախարովի գործը. վերջինս Կրուշէվանին դատի է կանչել զրպարտելու համար։ Երբ դատաւորները առանձնանալու են գնացել խորհրդակցելու համար, դահլիճը ամբողջովին բռնած իսկական ռուս մարդկանցից մէկը—Ֆլօրաշէվը բռունցքով հարւածել է Զախարովին։ Կրուշէվանը դատապարտւել է մի շաբաթեայ բանտարկութեան հաւպտվախտում։ Իսկ մի ուրիշ գործի համար, որ կայանում էր նրանում, որ նա գրգռել է գիւղացիներին բոյկոտ հրատարակել հրէաների դէմ, նա տուգանքի է ենթարկւած 200 րուբլու։

ՄԱԴՐԻԴ, 21 նոյեմբերի։ Նոր կաբինետը հրաժարական տուեց։

ՏՕԿԻՕ, 21 նոյեմբերի։ Բուդդայականութեան պրոպագանդայի առիթով Ճապոնիայի և Չինաստանի միջև բարդութիւններ են առաջ եկել։ Ճապոնական «Նիսի-Յոնվանձի» աղանդը, նպատակ ունենալով բուդդայականութեան տարածումը, սկսել է մեհեան կառուցանել Պեկինում։ Ճապոնիայի դեսպանը Պեկինում—ճապոնական բուդդայականութեան տարածման նկատմամբ—քրիստոնէութեան համահաւասար իրաւունքներ է պահանջում, բայց Չինաստանը չէ համաձայնում։

ԿԻԵՎ, 21 նոյեմբերի։ Արսենալում մորթւած է 5 հոգուց բաղկացած հրէայ մի ընտանիք։ Չարագործները բռնւած են։

22 նոյեմբերի

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 20 նոյեմբերի։ Այսօր բացւեց կոնգրէսի վերջին նստաշրջանը։

ՄՕՍԿՎԱ, 21 նոյեմբերի։ Քաղաքին բաց թողնւած երեք միլիոնի փոխառութիւն՝ դպրոցական շէնքեր կառուցանելու համար։

ԼՕՆԴՕՆ, 21 նոյեմբերի։ Լորդերի պալատը վերջացրեց դպրոցական բիլլի համար առաջարկած ուղղման քննութիւնը։ Օպպոզիցիան չը զիջեց։ Չը նայած որ կառավարութիւնը առարկեց այդ բանի դէմ, բայց և այնպէս ձայների մեծամասնութեամբ—131-ով ընդդէմ 45-ի—ընդունւեց ուղղումը, որի համաձայն ընդլայնւում է ծնողների իրաւունքները կրօնի դասատւութեան նկատմամբ։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 21 նոյեմբերի։ Գիրֆիլը նշանակւած է ներքին գործերի մինիստր, Մաուդին—գերագոյն դատարանի նախագահ։

ՏԱՄԲՕՎ, 21 նոյեմբերի։ Ձերբակալւած են տեղական ռազմիկ խմբի 18 անդամները։

ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ, 21 նոյեմբերի։ Քաղաքի մի մասում գտնւած է ոսկի պարունակող աւազակոյտ։

ԹԵՀՐԱՆ, 21 նոյեմբերի։ Պաշտօնական «Իրան» լրագիրը յայտնում է, որ Բիրմանշահում ռմբի պայթումից սպանւել է մի տանուտէր։ Խուզարկութեան ժամանակ գտնւած է 30 ռումբ, որից 8-ը բոլորովին լցրած են եղել։

ՕԴԵՍՍԱ, 21 նոյեմբերի։ Նոյեմբերի 21-ին նաւահանգստաներում կեանքը բոլորովին մեռաւ. Նաւահանգստում կանգնած բոլոր նաւերի ծառայողները աշխատանքները դադարեցրին։ Ոչ մի նաւ չը մեկնեց։ Գեներալ-նահանգապետի հրամանով բոլոր գործադուլներին առաջարկւած է հեռանալ։ Բոլոր նաւերի համար նորերին են ընդունում։ Վաղը Սեվաստոպոլից գալու է զինւորական նաւերի նաւաստիների մի խումբ, հերթական նաւագնացութեան համար։ Մեկկա ուխտ գնալու համար հասած հարիւրաւոր մահմեդականները կրիտիկական դրութեան են մատնւած։ Նաւաստիներից շատերին ձերբակալւում են։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 նոյեմբերի։ Հոկտեմբերականների տեղական բաժինները որոշել են Տօմսկում եռանդուն գործունէութիւն սկսել Կրեմենչուգում—համաձայնութիւն կապել միւս կուսակցութիւնների հետ։ Բացւել է տեղական բաժին Կերչում, ուր գեներալ-նահանգապետը արտասանել է հայրենասիրական մի ոգեւորւած ճառ։

ՄԱԴՐԻԴ, 21 նոյեմբերի։ Նոր կաբինետը կազմւ. մինիստր-նախագահ՝ Վէգա Արմիխօ, արտաքին գործերի մինիստր՝ Պերէզ Կաբալէրօ, ներքին գործերի՝ Ռոմանոնէսը, զինւորական՝ Վէյլեր, արդարադատութեան՝ Բարրօզօ։

ՓԱՐԻԶ, 21 նոյեմբերի։ Մինիստրների խորհրդի նիստում Պիշօնը յայտնեց, որ բոլոր մեծ պետութիւններին նոտա է ուղարկւելու, որով ծանուցւելու է, որ Մարոկկոում ընդհանուր գործողութիւնների առիթով Ֆրանսիայի և Սպանիայի միջև արդէն համաձայնութիւն է կապւել։ Պիկարը ասաց, որ եկեղեցական գոյքերը ցուցակագրելու գործից հրաժարւած օֆիցերները հրաժարական են տուել։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնւած 1880
(Գոլովինսկի, Վորոնցովի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերի
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) միզաւոր. հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Ջ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան և կանանց և երեխայոց հ.։
Ի. Հ. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Գ. ՀԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Յ. Գուրդենով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՂԻՆՈՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 10—12, երեկոյեան 6—8։ Կանանց համար 12—1 ժամը։
Սօլոլակ, անկիւն Բէհբութեան և Գասկեվիչի փողոցների, № 33/15։
(ա. օ.) 60—100

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գոլովինսկի պրօսպէկտի և Կոջորսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կոջորսկի փողոցից № 2
(ա. օ.) 280—300

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Գ. Զախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ
ՆԵՐՔԻՆ եւ ՋՂԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը { առաւ. 10—12 ժ. երեկոյեան 6—7 ժ.
Տէլէֆօն № 1087
Սօլոլակ, Լերմոնտովսկայա փող., 16.
(ա. օ.) 60—150

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Կ. ԿԼՕՆՃԵԱՆ
Արտասահման մեկնելու պատճառով
ԸՆԴՀԱՏՈՒՄ է
հիւանդների ընդունելութիւնը։ 1—3

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. Շերմազանեան
Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը։ Երեւանեան հրապարակ, տ. Գուրգենովի № 7. պօդեզդ նոտար Մչեդլովի։
(ե.հ.զ.) 80—100

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Հինգշաբթի, նոյեմբերի 23-ին
Անդամների, կանդիտատների և նրանց ընտանիքների համար
Արքունական թատրոնների ցուցարար (демопетраторъ) Ն. Ն. Բօլէտի խումբը
կը ցուցադրէ
Ելէքտրական պրօժէկտոր
(կատարելագործւած սինեմատոգրաֆ)
երեք բաժիններով.
ցոյց կը տրւեն ֆէէրիաներ, դրամատիկական և ծաղրական տեսարաններ։
Սկիզբն է 8 ժամին երեկոյեան։
Հիւրերը անդամների երաշխաւորութեամբ վճարում են մուտքի փող 1 րուբլի, անկախ տոմսերի արժէքից։
Աշակերտներին արգելւում է։
1—1

Լոյս տեսաւ և վաճառւում են
Ե. ԹՈՓՉԵԱՆԻ
ԼՈՅՍ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ—(պատի 50 կոպ., գրպանի—20 կոպ.)—բոլորովին նոր բովանդակութեամբ։
Պատի օրացոյցի տախտակը—մի քանի գոյներով տպած «Մայր Հայաստանի» պատմական պատկերը և գիւղացի ու բանւոր աշխատաւորների էմբլեմները։
Գումարով գնողները թող այժմեանից դիմեն Тифлисъ, Мадатовская № 5, Е. Топчяну, կամ «ՓԱՐՈՍ» գրախանութ, Երեւանեան հրապարակ, Նիկ. Մատինեանին։
3—5

Արիստակէս արքեպիսկոպոս
Սեդրակեանի
ՄԵԾԱԴԻՐ
(30×40 ст. մեծութեամբ)
ԼՈՒՍԱՏԻՊ ՆԿԱՐԸ
Ցանկացողները կարող են դիմել՝ ֆոտոգրաֆ Մ. Գնունուն, հատը 25 կոպ., Тифлисъ, Михайловская № 22.
Գումարով գնողներին զիջում։
Գաւառներից 10 օրինակից պակաս պատուէրները չեն կատարւում։
(ե. հ. շ.) 3—6

Մի օրիորդ որ աւարտել է Նաև Գայեանեան դպրոցը և յետոյ գիմնազիա, որոնում է դասեր, կամ մի որևէ ՊԱՇՏՕՆ. հասցէն՝ «Մշակ»-ի խմբագրատունը, կամ Կովկասեան գրավաճառանոց, «Լօնդօն» հիւրանոցի տակ։
(ե. հ. կ.) 2—3

3 ՌՈՒԲԼԻ
ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
„ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ“
պատկերի երկրորդ էժանագին հրատարակութիւնը,
որի միակ նպատակն է հնարաւորութիւն տալ իւրաքանչիւր հայի ունենալ այդ ազգային նուիրական յիշատակը։
Ի նկատի ունենալով, որ այս նպատակին հասնելու գլխաւոր պայմանն է գնի էժանութիւնը, բացի այն, որ առաջի հրատարակութիւնից մնացած քարերը բաւականին էժանացնում են այս հրատարակութիւնը—վճռեցի բացառապէս միայն ինքս վաճառել և այն 25—30% օգուտը, որ պէտք է ստանային վաճառականները, զեղջել նախկին (5 րուբ.) գնից և այսպիսով հասցնել գինը մինիմումի՝ այն է
3 րուբլի ճանապարհածախսով։
Ինձ մօտ վաճառւում է նոյնպէս արծաթից շինւած
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՈՇՄԸ,
որպէս զարդ ժամացոյցի շղթայից կախելու համար.
Գինն է 3 րուբլի ճանապարհածախսով։
Առանց կանխավճարի չէ ուղարկւում։
Դիմել՝ Тифлисъ, Веляминовская 24, В. Варданяну.
(ե. հ.կ.) 8—10

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1907 Թ.
ԱՇԽԱՏԱՆՔ
Ժողովրդական, տնտեսական, գիւղացիական
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ
(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)
Նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ, ինչ որ 1906 թւին, աշխատակիցների ուժեղացրած կազմով. ամեն համարում Ստորա-կէտի շաբաթական Ֆելիէտօնով
«Աշխատանքը» նուիրւած է լինելու հայ գիւղացիութեան և նրա միջից դուրս եկած պրօլետարիատի շահերին և կարիքներին։
«Աշխատանքը» առանձին ուշադրութիւն է դարձնելու մեր գաւառի հասարակական և տնտեսական կեանքի վրայ։
1907 թւի տարեկան բաժանորդներին «Աշխատանքը» տալու է ձրի, բացի 50 համար թերթից, բաղկացած 800 երեսից, մեծադիր երեսներից, հետեւեալ չորս գրքերը.
Տարին 4 ր.
1. «Ժողովուրդը և հողը» տնտեսական-հասարակական ուսումնասիրութիւն։
2. «Ամենալաւ վարը» մատչելի գիւղատնտեսական ցուցմունքներ։
3. «Թանկագին բոյսերի թշնամիները եւ նրանց դէմ կռւելու միջոցները», հանրամատչելի գիտական ուսումնասիրութիւն այգեգործների, պարտիզպանների և բամբակագործների համար։
4. «Գիւղական նամակներ» զրոյցներ ժամանակակից քաղաքական-տնտեսական-հասարակական հարցերի մասին։
Բացի դա բաժանորդները ձրի ստանալու են՝
Երկու բազմագոյն, շքեղ նկարներ (14×8 վերշ.)
I «Կարկատից յետոյ» (կուղարկւի յունվարի 15-ին)
II «Գալիս են» (կուղարկւի սեպտ. 15-ին)
ԲԱԺՆԵԳԻՆԸ
Գրքերի և նկարների հետ միասին ճանապարհածախսով
Ռուսաստանի համար: Տարին 4 ր. Կէս տարին 2 ր. 50 կ.
Արտասահմանի համար: Տարին 18 ֆրանկ Կէս տարին 10 »
Հասցէն՝ Тифлисъ, редакцію журн. «Ашхатанкъ» Бебутовская № 56.
Խմբագիր-հրատարակիչ՝ Ա. Աթանասեան

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
Բազմամեայ ընկերութիւն, որ զբաղւում է կեանքի դժբախտ դէպքերի ապահովագրութեամբ
Եկամուտների եւ դրամագլուխների ապահովագրութեան
ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Հիմնւած 1835 թւին
Ընդունում է ապահովագրութիւններ ամենազանազանակերպ պայմաններով և գումարներով, աննշան գումարներից մինչև 200,000 ր. մի անձի վրայ։ Ապահովագրողների մասնակցութիւն ընկերութեան գործերում և եկամուտներում, ապահովագրական վկայականների պայմանաժամի յարատեւութիւն։ Ապահովագրական գումարների վճարում, ինքնասպանութեան դէպքում։ Ճանապարհորդութիւնների անսահմանափակ իրաւունք։ Ապահովագրութեան դադարեցման, գրաւ դնելու և ստացման ժամանակ ամենաշահաւէտ պայմաններ։
Պահեստի և այլ դրամագլուխներ 38,000,000 րուբլու.
Մանրամասն տեղեկութիւններ, ընկերութեան կանոնադրութիւնները և հաշիւները, ինչպէս և ընդունելութեան ցուցակները, յայտարարութիւնները և այլն, կարելի է ստանալ ձրի
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ
Тифлисъ. Барятинская ул., № 6, телефонъ № 415.
2—30 Գլխաւոր ներկայացուցիչ՝ Բ. Գ. Կրասնիկանսկի

ՆԱԽԿԻՆ ԱՐՇԱԿՈՒՆՈՎԻ (ԱՅԺՄ ԻԶՄԻՐԵԱՆԻ) ՏԱՆԸ
Դւորցովայա փող. № 24, շաբաթ 25-ն նոյեմբերի 1906 թւին.
Կը կայանայ
ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ,
Մասնակցութեամբ պ. պ. Ա. Վ. Մ. ալ... և քառաձայն խառն խմբի, ղեկավարութեամբ Ալէքսիանոսի։ Վերջը ասիական և եւրոպական պարեր։
Սկիզբն է երեկոյեան 7 ժամին
Տոմսակները վաղօրօք կարելի է ձեռք բերել «Փարոս» (Կեօսկ), Երեւանեան հրապարակ.
Պատասխանատու Կոկօ
Կարգադրիչ Կարապետ Միրզոյեան։
(ե. հ.) 2—2

ՄԷՇԷՐԻՆՍԿ-ՊՕԴՎՕՐ
Մոսկվա իշխնայումն
Նոր կահաւորւած 120 համարից ելեքտրական լուսաւորութիւնով նոր մեքենայ բարձրանալու,
ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ.
Ամենայն յարմարութիւններով։
չ. ու. 1—8

ՓՈՐՁՎԱԾ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ
Պատրաստում է աշակերտներ ու աշակերտուհիներ բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Ընդունում է նաև ռեպետիրովկա։ Հասցէն «Մշակի» խմբագրատունը։
(ա. օ.) 8—10

ԲԱՑՎԱԾ ԵՆ
ԿԱՀԱՒՈՐՎԱԾ
ՍԵՆԵԱԿՆԵՐ
„ՊԱԼԷ-ՌՕՅԱԼ“
ԹԻՖԼԻՍՈՒՄ
Քաղաքի կենտրոնում, Դվորցովայա փողոցի վրայ, նոր տուն Սարաջևի, նոր նորոգւած, լաւ կահաւորւած և լուսաւորւում է ելեքտրականութիւնով։
Գինը 75 կոպէկից մինչև 6 րուբլի օրական։
8—10

Կ. ԱՖՐԻԿԵԱՆԻ
ՏՆԿԱՐԱՆՈՒՄ
ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
ամեն տեսակ պտղատու ծառերի պատուաստներ և նոյնպէս տունկեր էժանագոյն գներով ծառայեցողներին ուղարկւում են ձրի ըստ պահանջման։
Հասցէն՝ Г. Гори, Тифл. губ. К. Ө. Африкіанъ.
(ե. հ. կ.) 14—15

Գանձակում տեղի ունեցած բռնարարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրոնական ՀԻՒՐԱՆՈՑԸ շքեղ կահկարասիներով Թիֆլիս Գոլովինսկի փողոցի վրայ № 23, պրաւօսլաւնի հոգևոր սեմինարիայի դիմաց
„ՆՈՄԵՐԸ ՑԵՆՏՐԱԼ“
մակնանունով։ Գները 70 կոպէկից մինչև 2 րուբլի։ Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով։
Ալէքսանդր Ցարուքինով
(հ. կ. ե.) 36—100

ՄԻ ՈՒՍԱՆՈՂ
ցանկանում է
ԴԱՍԵՐ ՈՒՆԵՆԱԼ.
Հասցէն՝ «Մշակի» խմբագրատուն։
(ե. հ. կ.) 3—5

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնէ
ԱԼԷՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ
„ՌՈՒՍ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ“
Աշխատութեան երկրորդ հատոր
ԿՈԼՑՕՎ, ՆԵԿՐԱՍՕՎ, ՆԻԿԻՏԻՆ և ՊԼԵՇՉԵԵՎ
Բանաստեղծների պատկերներով
Դիմել՝ Москва, Тверская, меблир. ком. «Флора», Александру Цатуріану.
3—5

Լոյս է տեսել և վաճառւում է
Ա. ԳԱԼՍՏԵԱՆԻ
„Կիրակնօրեայ դպրոցներ“
Ձեռնարկ ուսուցիչների համար
Գինն է 50 կոպ.
Զուտ արդիւնքը յօգուտ Անիի ուսումնասիրութեան գործին։
Դիմել՝ Баку, Мореход. училище дальн. плаванія А. Галустянцу, կամ Բագւի հայ գրավաճառներին և Թիֆլիս՝ «Գուտենբերգ» գրախանութին։
6—15

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.
Электропечатная, Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 5